Azg
Ազգ
28 ՕԳՈՍՏՈՍ 2007 ԵՐԵՔՇԱԲԹԻ 154 (3806)

Գրադարան
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ
գիտական

Աֆրիկյա՞ն ժանտախտ Հայաստանում

Ինչպես Նովոսի-Արմենիա գորնակալությանը հայտնել է անասնաբուժության եւ մթերքների անվտանգության պետական վարչության պետի տեղակալ Գեւորգ Թովմասյանը, Հայաստանում աֆրիկյան ժանտախտի տարածման կապակցությամբ Ռուսաստանից մասնագետներ են հրավիրվել: Ըստ Թովմասյանի, ռուս մասնագետները արդեն Հայաստանում են, վերջիններս մինչ այդ եղել են Աբխազիայում ու Վրաստանում եւ այս առումով աբխազական մեծ փորձ ունեն: Նա ավելացրել է նաեւ, որ հիվանդ կենդանիների մաշկի նմուշները ուղարկվել են Ռուսաստանի եւ Մեծ Բրիտանիայի լաբորատորիաներ ստուգման համար: Թովմասյանը նշել է. «Այն, որ տարածվածը խոզերի ժանտախտ է, անժխտելի է, սակայն մնում է պարզել՝ աֆրիկյա՞ն է, թե սովորական ժանտախտ»:

Խաչիկ Մանուկյանի ընտրությամբ ՀՀԿ-ն վերստին ցույց տվեց մկանները



Երբ ԶԼՄ-ները խոսում էին թիվ 15 ընտրատարածքում կրկնական ընտրությունների վրա հարկատուների հաշվին եւս 22 մլն դրամ հավելյալ ծախսի մասին՝ բյուջեից կախված հասարակության շահերից ելնելով, ճիշտ էին անում: Սակայն ի՞նչ է 22 մլն դրամը իշխող քաղաքական ուժի վերստին հաղթանակի համեմատությամբ, նախագահական ընտրություններին մոտեցող ժամանակի մեջ եւ խորհրդարանական ընտրություններից երեքուկես ամիս անց վերստին ՀՀԿ-ի ինքնահաստատման հանդեպ, քանի որ Թալինի թիվ 15 ընտրատարածքի ընտրությունները մկանների ցուցադրման լրացուցիչ առիթ էին ՀՀԿ-ի համար: Ընդ որում՝ ձայների բաշխման թվացույցը եւս պատահական չէ, անկախ նրանից՝ այդ-ոիսի պատկեր ստանալու համար նախապես էին աշխատել, վարչական ռեսուրսո՞վ, ընտրակաշառո՞վ, թե՞ առանց դրանց. կարելի է ասել, որ Խաչիկ Մանուկյանի հաղթանակը, ճիշտ որ, իր իսկ խոսքով, ոչ միայն իրենն է, այլեւ ողջ Հանրապետականինը, եւ բոլորին իրենց տեղը ցույց տալու թափանցիկ ակնարկ: Նախ՝ ԲՀԿ-ին, որի հովանավորյալ Մնացական Մնացականյանին մի ինչ-որ 160 ձայնով հաղթելը «պալոժ» չէր Հանրապետականի համար՝ ԲՀԿ-ականները կարող էին մտածել, թե հաղթանակն իրենի նվիրեցին ՀՀԿ-ին: Իսկ հիմա՝ խնդրեմ, այնպես է, ինչպես որ պետք է լինի, եւ դա նախագահական ընտրություններին էլ է ուղերձ պարունակում.16 հազար ձայնից ավելի ՀՀԿ-ին, 10 հազար ձայնից ավելի ԲՀԿ-ին (նրա հովանավորյալն էր Թալինի քաղաքապետ Մնացական Մնացականյանը), 7 հազար ձայնից մի փոքր ավելի ՀՅԴ-ին, եւ միայն հազար ձայնից մի փոքր ավելի «Ժառանգությանը»՝ թե այս են ձեր ձայները, էլ մի խոսեք:

Տես էջ 3

ՍՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Կբացահայտվի՞ Լոռու մարզի դատախազ Ալբերտ Ղազարյանի սպանությունը

Օգոստոսի 24-ի լույս 25-ի գիշերը, ժամը 00.20-ի սահմաններում Վանաձորում սպանվել է Լոռու մարզի դատախազ, արդարադատության երրորդ դասի պետական խորհրդական Ալբերտ Կարուշի Ղազարյանը: Ըստ դատախազության պաշտոնական հաղորդագրության, նա սպանվել է աշխատանքից տուն վերադառնալիս, իր տան մոտակայքում: Նրա ուղղությամբ արձակվել է չորս կրակոց, որի հետեւանքով դատախազն ստացել է երեք միջանցիկ եւ մեկ կույր վնասվածք՝ թիկունքի, ուսերի եւ պարանոցի շրջանում: Դեպքի վայրի զննությամբ հայտնաբերվել է «Մակարով» տեսակի ատրճանակի 4 պարկուճ: Դեպքի վայր է մեկնել օպերատիվ, քննչական խումբը՝ հանրապետության գլխավոր դատախազի ժամանակավոր պաշտոնակատար Մնացական Սարգսյանի գլխավորությամբ: Կատարվել է դեպքի վայրի, դիակի զննություն, նշանակվել են դատաբժշկական, դատահետաքրքրական փորձաքննություն: Գլխավոր դատախազության քննչական վարչության վարույթում հարուցվել է քրեական գործ՝ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի երկրորդ մասի երկրորդ կետի հատկանիշներով: Ստեղծվել է քննչական խումբ, որի կազմում ընդգրկվել են դատախազության, ոստիկանության եւ ազգային անվտանգության փորձառու աշխատակիցներ:

Օգոստոսի 27-ին վանաձորցիները վերջին հրաժեշտը տվեցին Ա. Ղազարյանին:

Ալբերտ Ղազարյանը ՀՀ դատախազության կոլեգիայի անդամ էր, մեր հանրապետության իրավական համակարգի ճանաչված եւ պրոֆեսիոնալ գործիչներից մեկը:

ՄԻՆՎԵՐ ՄԻԿՈՅԱՆ
Վանաձոր

Նախագահ Ռոբերտ Քոչարյանը մեկնել է Հունաստան

Ինչպես հաղորդել են ՀՀ նախագահի աշխատակազմի մամուլի գրասենյակից, նախագահ Ռոբերտ Քոչարյանը մեկշաբաթյա մասնավոր այցով մեկնել է Հունաստան: Այլ նպատակների եւ այլ մանրամասների մասին չի հաղորդվում: Նկատենք, որ այնտեղ մոլեգնող հրդեհները այդ երկիրը վտանգավոր են դարձնում զբոսաշրջիկների համար:

Հնդկաստանում մոլեգնում է խոլերան

Հնդկաստանի Օրիսայի նահանգում խոլերայի բռնկմանը զոհ է գնացել 84 մարդ: Մահվան դեպքեր են գրանցվել նահանգի երեք վարչական օկրուգներում: Այս շրջաններում բնակչությունը ապրում է անբարենպաստ սանիտարական պայմաններում: Մաքուր ջրի բացակայությունը եւ հակասանիտարական վիճակը հիվանդության տարածման գլխավոր պատճառն են: Ներկայումս մոտ 4 հազար մարդ գտնվում է հիվանդանոցներում:

6-օրյա ուսումնական շաբաթ, առանց պարտադիր դպրոցական համազգեստի

Կամո Արեյանը պատմեց նոր ուսումնական տարվա հոգսերի մասին

ԱԲԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Նոր ուսումնական տարվա նախապատրաստական խնդիրներին էր նվիրված Երեւանի փոխքաղաքապետ **Կամո Արեյանի**՝ երեկ քաղաքապետարանում տեղի ունեցած մամուլի ասուլիսը: Ըստ փոխքաղաքապետի, ուսումնական տարվա սկզբի կապակցությամբ արդեն հանձնարարական է տրված համապատասխան կազմակերպություններին դպրոցների անխափան ջրամատակարարման եւ էլեկտրամատակարարման ապահովման, դպրոցների եւ դպրոցամերձ տարածքների մաքրման համար: Ճանապարհային ոստիկանությունը սահմանելու է անվտանգ երթեւեկության 10-օրյակ: Սա՝ կազմակերպչական մասով:

Ինչ վերաբերում է կրթական գործընթացին, ապա Կամո Արեյանը հայտնեց, որ այս տարի առաջին դասարան են ընդունվելու միայն 2001 թ.-ին ծնված երեխաները եւ սովորելու են 12 տարի: Ներկա պահի տվյալներով, առաջին դասարանում կտովորի 8115 երեխա, բայց նշվեց, որ վերջնական տվյալներն ստացվում են սեպտեմբերի 5-ին: Ուստի այդ թիվը կավելանա: Փոխքաղաքապետը հիշեցրեց, որ անցյալ տարի, որն անցումային էր եւ ընդունվում էին ավագ ու կրտսեր հոսքերի առաջին դասարանցիներ, երեխաների թիվը մոտ 12 հազար էր:

Տես էջ 2

Օսկանյանի ելույթը Բլեդի ռազմավարական ֆորումում

Ինչպես հաղորդում են Հայաստանի արտգործնախարարության մամուլի եւ տեղեկատվության վարչությունից, «Սլովենիայի ԱԳ նախարար Դմիտրի Ռուպելի հրավերով օգոստոսի 26-27 նախարար Վարդան Օսկանյանը մասնակցել է Սլովենիայի Բլեդ քաղաքում տեղի ունեցած ռազմավարական ֆորումին: «Հարավային Կովկասի եւ Կենտրոնական Ասիայի տնտեսական եւ քաղաքական ուղղությունները. ԵՄ-ի դերը եւ ԵԱՀԿ-ն» թեմայով կլոր սեղանին նախարար Օսկանյանի ելույթը վերաբերում էր «տնտեսության բնագավառում ընդհանուր դրական զարգացումներին, որոնց շարունակականության ապահովումը կխթանի քաղաքական ոլորտում դրական զարգացումները»: Խոսելով տարածաշրջանի զարգացման մասին, ՀՀ նախարարը կարեւորել է կայուն տնտեսական զարգացման խնդիրների վրա ուշադրության սեւեռումը: Նա կոչ է արել միջազգային հանրությանը տարածաշրջանը դիտել ոչ միայն նավթ եւ գազ արտահանելու տեսանկյունից, այլ որպես մի ընդհանրության, որն ունի հզոր մարդկային ռեսուրս, որ պետք է օգտագործվի ու խրախուսվի:

Թուրքական մամուլը հակաթուրքական միտումների համար քննադատում է Բրայզային

Իսկ Զեյնո Բարանի հեղինակած ցենարը՝ համարում Թուրքիայի համար միանգամայն աղետաբեր

ՀԱՅՈՐ ՇԱՔԲԱԶՅԱՆ

Օգոստոսի 23-ին Սամսունում ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահ Մեթյու Բրայզայի եւ Զեյնո Բարանի ամուսնական արարողությունն է կատարվել: Հայաստանյան որոշ թերթեր, ինչպես նաեւ հեռուստաընկերություններ, Բարանին համարելով թրքուհի, իսկ Բրայզային՝ թուրքամետ, ամուսնության շուրջ աղմուկ են բարձրացրել, ընդհուպ պահանջելով... մեր իշխանություններից, որ միջոցներ ձեռնարկեն ծագումով հրեա, ամերիկացի այս գործչի դեմ: Ավելին, գործը հասել է նրան, որ այս ամուսնությունը վերագրվի Հայաստանի դիվանագիտական ձախողությանը:

Այս ամենը չէր վրիպել թուրքական մամուլի ուշադրությունից, եւ «Զաման» թերթն օգոստոսի 27-ին հրապարակել էր «Բրայզայի ամուսնությունն անհանգստացրեց հայերին» վերնագրով հոդվածը: Ցախողումից խուսափելու համար ամուսնության առնչությամբ ինչ էր անելու հայկական դիվանագիտությունը, հայտնի չէ: Բայց որ ԱՄՆ պետքարտուղարի օգնականի տեղակալ Մեթյու Բրայզան որպես ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահ, Լեռնային Ղարաբաղի հարցում ի պաշտոնե պարտավոր է առաջնորդվել Վաշինգտոնի, այլ ոչ թե անձնական տեսակետներով, ակնհայտ է:

Հատկանշական է, որ թուրքական մամուլը Բրայզային ամենեւին էլ թուրքամետ չի համարում, հիշեցնելով Մեջլիսի 2003 թ. մարտի 1-ի նիստի մասին, որտեղ մերժվել էր Թուրքիայի տարածքում զորքեր տեղակայելու ԱՄՆ-ի պահանջը: Դրան ի պատասխան, ինչպես նշում է «aktivhaber.com», Բրայզան հանդես էր եկել Թուրքիային խստագույնս պաշտելու առաջարկով:

Տես էջ 2

«Իսրայելը պետք է բարոյական բարձր կեցվածք ընդունի»

Մ. Նահանգներում գործող «Միություն ընդդեմ վարկաբեկման» հրեական կազմակերպության Հայոց ցեղասպանությունը ճանաչող հայտարարությունը անարձագանք չմնաց նաեւ Երուսաղեմի հայկական համայնքում: Իսրայելական «Ջերուսալեմ փոստ» թերթի օգոստոսի 23-ի համարում տպագրված «Հայերը հրեաներից պահանջում են բարոյական բարձր կեցվածք» հոդվածն այդ առիթով անդրադարձել է հայ հոգեւորականների ու համայնքի անդամների կարծիքներին, միաժամանակ փաստելով Հայոց ցեղասպանության ճանաչման նկատմամբ Իսրայելի կառավարության ժխտողական դիրքորոշումը:

«Իսրայել պետությունն ու հրեական բոլոր կազմակերպությունները պետք է բարոյական բարձր կեցվածք ընդունեն եւ մի կողմ թողնելով քաղաքական շահերը, Համաշխարհային առաջին պատերազմի ժամանակ թուրքերի իրականացրած ոճրագործությունները ճանաչեն որպես ցեղասպանություն», չորեքշաբթի հայտարարել են Երուսաղեմի հայկական համայնքի ներկայացուցիչները: Հոդվածագիր Էդգար Լեֆկովիչը նշում է, որ անցած տարի Մեծ եղեռնի զոհերի հիշատակի օրը Երուսաղեմի հայոց պատրիարքը ծաղկեպսակ է դրել քաղաքում: Լրագրողը մեջբերում է Հայոց պատրիարքարանի հոգեւորական, հայ Սամուել Եղոյանի հետեւյալ խոսքը. «Իսրայելն այս հարցը շատ ավելի լավ է հասկանում, քան մեկ այլ պետություն, բայց քաղաքականացնելով այն՝ փչացնում է իր դատողությունները»: Նա նաեւ նշում է, որ Իսրայելի քաղաքական գործիչները քանիցս կանխել են Հայոց ցեղասպանության ճանաչումը: «Երբ քաղաքականացնում ես հարցը, սպանում ես այն ոգին, որով ստեղծվել են Մ. Նահանգները ու Իսրայելը: Եթե չես ցանկանում բացահայտորեն ընդունել ցեղասպանությունը, գոնե ասա, որ այն տեղի է ունեցել», ավելացրել է Եղոյանը:

Երուսաղեմի հայկական դպրոցի եւ գրադարանի տնօրեն հայր Նորայր Ղազարյանը իր հերթին ասել է, որ հրեական լոբբին որպես Հոլոքոսթ ապրած ժողովրդի շահերը պաշտպանող կազմակերպություն, պետք է ավելի լայնախոհ լինի եւ դրսեւորի Հայոց ցեղասպանությունը լիովին եւ անվերապահորեն ճանաչելու բարոյական կեցվածք, մի կողմ թողնելով քաղաքականությունը: Նա հավելել է, որ Իսրայելը եւ հրեական աշխարհը չպետք է երկյուղեն Թուրքիայում ապրող հրեական համայնքի հանդեպ ոտնձգություններից, նկատի առնելով այնտեղ ապրող հազարավոր հայերի ներկայությունը: Նա միաժամանակ վկայակոչել է Թուրքիայի լավ հարաբերությունները Հայոց ցեղասպանությունը ճանաչած Ֆրանսիայի եւ Բելգիայի հետ: Հոդվածագիրը իր կողմից նշում է, որ պատմաբանների գնահատմամբ, 1,5 մլն հայ է սպանվել օսմանյան Թուրքիայում՝ 1915-1923 թվականների ընթացքում, եւ ուսումնասիրողներն այդ դեպքերը լայնորեն դիտարկել են ու որակել որպես 20-րդ դարի առաջին ցեղասպանություն: Չնայած դրան, Թուրքիան ժխտում է, ասելով, որ կորուստները ոռճացվել են, սպանվածները քաղաքացիական պատերազմում զոհվածներն են:

Երուսաղեմի հայկական համայնքի անդամները նաեւ նշել են, որ իրենց ընկալմամբ, անառարկելիորեն տարբեր են հայերի կոտորածը որպես ցեղասպանություն ճանաչող հրեա հասարակ ժողովրդի եւ Թուրքիայի հետ ջերմ հարաբերությունները վնասելուց զգուշացող քաղաքական գործիչների հայացքները: «Ես գիտեմ, որ հրեա ժողովուրդը մեզ հետ է եւ ճանաչում է Հայոց ցեղասպանությունը, բայց քաղաքական շահերը Քնեսեթին եւ հրեական խմբակցություններին հետ են պահում նույնն անելուց», ասել է Հին քաղաքի բնակիչ, խանութպան, 63-ամյա Հակոբ Անդրեասյանը: Լինելով ցեղասպանություն վերապրածների զավակ, նա գտնում է, որ հայերի ու հրեաների ողբերգությունը ընդհանուր է: Երբ ինքը ֆիլմեր է դիտում Հոլոքոսթի մասին, դրանցում տեսնում է ոչ միայն հրեա, այլեւ հայ երեխաներ: «Ասես տեսնում եմ իմ հոր աչքերը, երբ նա 7 տարեկան էր»:

Անդրեասյանը կարծում է, որ Հայոց ցեղասպանության ճանաչման օրինագիծը Մ. Նահանգների Կոնգրեսում քննարկման ներկայացնելը հնարավոր դարձավ ոչ թե Ամերիկայի հրեաների, այլ հայ ու հրեա մտավորականների ջանքերի շնորհիվ: Նա նաեւ մեջբերում է Ամերիկայի հրեական կոմիտեի փոխնախագահ Դեյվիդ Հարիսի ակնարկը, որ հայ եւ թուրք պատմաբանները պետք է միասին քննարկեն Հայոց ցեղասպանության հարցը: «Արդյոք մենք պե՞տք է խնդրենք, որ հրեա եւ նացիստ պատմաբանները միասին քննարկեն Հոլոքոսթի հարցը», հարցրել է Անդրեասյանը: Որպես բնիկ երուսաղեմցի իր համար չափազանց կարեւոր է, որ Իսրայելը չլինի Հայոց ցեղասպանությունը ճանաչող վերջին պետությունը: «Ես գիտեմ, թե ինչ զգացումներ ունի հրեա ժողովուրդը եւ չեմ ցանկանում, որ հրեական պետությունը վերջինը ճանաչի ցեղասպանությունը»: Երուսաղեմի հայ համայնքի անդամները կարծում են, որ ի վերջո բոլոր երկրները կընդունեն Հայոց ցեղասպանությունը:

«Վաղ թե ուշ կգա ճշմարիտ պահը», իր խոսքն ամփոփելով ասել է Եղոյանը:

ՌՈՒԶԱՆ ՊՈՂՈՍՅԱՆ

Ահաբեկչությո՞ւն Ռուբեն Թորոսյանի նկատմամբ

«Գերագույն խորհուրդ-պաշտամավորական ակումբ» հասարակական կազմակերպության (ՀԿ) նախագահ Ռուբեն Թորոսյանը երեկ հայտարարություն է տարածել՝ տեղեկացնելով, որ իր նկատմամբ ահաբեկչության փորձ է եղել: Մասիվից Ջրվեժ գնալու ճանապարհին, ՀԿ-ի նախագահի հավաստմամբ, երկու մուգ աղակիներով մեքենաներ մոտեցել են իրեն, կիսաձայնված դեմքով մեկն ասել է. «Զգույշ եղիր: Եթե այդպես շարունակես, վերջդ լավ չի լինի»:

Ռուբեն Թորոսյանը չի շտապում կատարվածը որեւէ մեկին վերագրել, բայց նկատում է, որ ամենայն հավանականությամբ, կատարվածն առնչվում է «Ընտրախախտումների, զինծառայության եւ քաղբանտարկյալների մասին» օրեր առաջ իր տարածած հաղորդագրությանը: Թորոսյանը հայտարարում է, որ ինքը շարունակում է իր աշխատանքը միջազգային կառույցներում, իսկ իր հետ կատարվածի պատասխանատվությունը կրում են «ապօրինի ընտրություններով ձեւավորված իշխանությունները»:

Գ. Գ.

6-օրյա ուսումնական շաբաթ, առանց պարտադիր դպրոցական համազգեստի

1-ին էջից

Ավագ դպրոցի համար անցումը 12-ամյա կրթական համակարգին տեղի կունենա 2009/10 թթ. ուսումնական տարում, իսկ այս տարի այն փորձնական ծրագրով կներդրվի 10-15 դպրոցներում: Տեղեկացվեց նաեւ, որ նոր ուսումնական տարում դպրոցներում միասնական քննություններ են անցկացվելու նաեւ օտար լեզուներից եւ մաթեմատիկայից:

Այս ուսումնական տարում դարձյալ գործելու է 6-օրյա ուսումնական շաբաթը, ինչը որոշվել է նկատի ունենալով մասնագետների կարծիքը, ուսումնական ծրագրերի խտությունն ու ծանրաբեռնվածությունը: Ներառական կրթական ծրագրում (հաշմանդամ երեխաների համար) ընդգրկվել են 9 դպրոց եւ այդտեղ սովորող 247 աշակերտ: Երեք դպրոցներ, որ նախկինում մինչ այս տարի գտնվում էին քաղաքապետարանի ենթակայության ներքո, դուրս են եկել այդ ենթակայությունից: Մասնավորապես թ. 5 դպրոցը վեր է ածվել գնահատման կենտրոնի, իսկ թ.1 եւ թ.10 դպրոցները՝ երեխաների սոցիալական կենտրոնների:

Դպրոցներում համակարգչայնացման մակարդակն, ըստ Կամո Արեյանի, վատ չէ, բայց բավարար էլ չէ: Դրանց թիվը 1745 է, որոնք տեղադրված են 187 համակարգչային դասարաններում: Դպրոցաշինության աշխատանքներ են իրականացվում մի շարք ծրագրերով: Դրանցից խոշորները երկուսն են՝ պետական բյուջեից հատկացված 3,7 մլրդ դրամով նորոգվում են 44 դպրոցներ եւ «Լինսի» հիմնադրամի 10 մլն դոլարով՝ 5 դպրոց: Նորոգման աշխատանքներ են կատարվում նաեւ Երեւանի քաղաքապետարանի, սոցիալական ներդրումների հիմնադրամի միջոցներով: Մի խոսքով, առանց «Լինսի» հիմնադրամի, դպրոցների նորոգմանն ուղղված գումարը գերազանցում է 4,5 մլրդ դրամը:

Փոխքաղաքապետը տեղեկացրեց, որ բոլոր դպրոցները լոկալ ջեռուցմամբ ապահովելու ծրագիր է մշակվում, որի ընդհանուր արժեքն է 1,7 մլրդ դրամ: Նրա հավաստմամբ, դասագրքային ապահովվածության առումով որեւէ խնդիր չի առաջանա: Տպագրվել են 22 անուն նոր դասագրքեր եւ ուսումնական ձեռնարկներ, որոնք բոլորը մինչ սեպտեմբերի 1-ը կոտրակվեն դպրոցներ: Իսկ երեխաների սննդով ապահովման հարցը դրված է դպրոցների տնօրենների վրա, որոնք պետք է ապահովեն օրենքով նախատեսված սննդի անվտանգության բոլոր պահանջները:

«Լինելո՞ւ են դպրոցական համազգեստներ, թե՞ ոչ» հարցին Կամո Արեյանը պատասխանեց, որ համազգեստի որեւէ պարտադրանք չկա եւ չի լինելու: Նա հայտնեց, որ կան դպրոցներ, որտեղ որոշվել է դպրոցական համազգեստ սահմանել, եւ որ այդ դպրոցներում նման որոշումը ընդունվել է դպրոցի խորհրդի, ծնողական կոմիտեի համաձայնությամբ:

ԲԵՅՐՈՒԹԻՑ ԵՐԵՎԱՆ՝ ՄԻ ԹՂԹԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Վանգավոր ապատեղեկատվություն

Օգոստոսի 25-ի երեկոյան «Հայլուրը» Հայաստանի եւ սփյուռքի հեռուստադիտողներին Լիբանանում իր թղթակցի միջոցով մի ապատեղեկատվություն տարածեց, որին կարելի էր չանդրադառնալ, եթե վանգավոր չլիներ: Հայաստանից Բեյրութ տեղափոխված թղթակից Անուշ Թրվանցը, թերեւս առանց գիտակցելու, թե ինչ անհեթեթություն է ներկայացնում հանրությանը, «Լիբանանի Նաղոլեոն» գեներալ Աունին ու նրա դաշնակից ՀՅԴաշնակցությանը նվիրված թղթակցության մեջ մրցման մեջ դրեց մի կողմից իր տգիտությունը լիբանանյան հարցերում, մյուս կողմից՝ կուսակցական իր հասվածամոլությունը:

Թրվանցը թղթակցության մեջ լիբանանյան քաղաքացիական պատերազմի վերջին՝ ամենակործան փուլի «հերոսներից» գեներալ Միշել Աունին ներկայացնում էր այնպիսի գովերգությամբ, որ թվում էր «Հայլուրը» լծված է լիբանանյան առաջիկա նախագահական ընտրություններում վերջինիս քարոզարշավին: Նրան ներկայացրեց որպես Լիբանանի բոլոր քրիստոնյաների կուռք, ինչը, մեղմ ասած, այդպես այդպես չէ: Լիբանանցի արաբ քրիստոնյաների հսկա զանգվածներ ամենեւին համաձայն չեն նրա թեկնածությանը, նկատի ունենալով գեներալի սիրիամետ լինելը, ով Թրվանցի երեւակայության մեջ խառնվել-դարձել էր «հակասիրիամետ ուժերի լիդեր»: Եթեր գնաց նաեւ Աունի հետ կարճ մի հարցազրույց, որտեղ գեներալը գովեստով էր արտահայտվում լիբանանահայության, մասնավորապես իր դաշնակից ՀՅԴաշնակցության մասին, որը վերջին լրացուցիչ ընտրություններում վճռական դեր էր խաղացել Աունի կողմնակցի ընտրության հարցում:

Անշուշտ, «Հայլուրի» թղթակիցը, որեւէ թղթակից, թերեւս կարող է չթաքցնել իր համակրանքն այս կամ այն թեկնածուի, այս կամ այն կուսակցության նկատմամբ: Սակայն հանրային հեռուստատեսությունն իրավունք չունի օտար մի երկրի, թեկուզ եւ հատկապես բարեկամ մի երկրի ընտրապայքարում դիրքորոշվելու այս կամ այն թեկնածուի կողքին, իսկ մի կուսակցության կարծիքը փաթաթելու ամբողջ մի համայնքի վզին:

ՀԱՄՈ ՄՈՍԿՈՓՅԱՆ

Թուրքական մամուլը հակաթուրքական միտումների համար քննադատում է Բրայզային

1-ին էջից

Ինչ վերաբերում է Զեյնո Բարանին, ապա նա, ըստ ulusal.com-ի, ծնվել է 1972 թ. հունվարի 31-ին: Հայրը լրագրող Ահմեդ Ուրան Բարանն է, որի մահից հետո նրա մայրը՝ Ֆյուսուն Մութլուն (նույնպես՝ լրագրող) ամուսնացել է «Վաքան» թերթի գլխավոր խմբագիր Զաֆեր Մութլուի հետ: 1991-ին ավարտելով Ստամբուլի օրիորդաց ավստրիական վարժարանը, ուսումը շարունակել է ԱՄՆ-ում Ստենֆորդի համալսարանում եւ մասնագիտացել միջազգային հարաբերությունների գծով: Սկսած 1996-ից Վաշինգտոնում աշխատել է Համաշխարհային բանկում, ապա «Նիքսոն» կենտրոնում, իսկ 2006-ից աշխատում է «Նոր պահպանողականների» հովանավորության տակ գտնվող «Հադսոն» ինստիտուտում եւ գլխավորում Թուրքիայի բաժինը:

Նախորդ համարում, անդրադառնալով Զեյնո Բարանի ազգային պատկանելիությանը, գրել էինք, որ նա չի կարող թրքուհի լինել, հավանաբար հրդեհի է: Թեեւ թուրքական կենտրոնական որոշ թերթեր նրան թրքուհի են համարում, սակայն ազգայնական մամուլը ճշտում է, ընդգծելով. «Բարանը նրանցից է, ովքեր նախընտրում են բնակվել Վաշինգտոնում եւ թուրքական անուն կրել»:

Հակառակ դրան, օրինակ՝ «antiulusul.com»-ում ելնելով Զեյնոյի հոր ալավիական ծագումից, ալավի են համարում նաեւ նրան, նշելով. «Ամեն քարի տակից ալավի է դուրս գալիս, ափսոս, մի ժամանակ ալավիներին Օսմանյան կայսրության դեմ Սաֆավյան Իրանն էր օգտագործում, իսկ հիմա՝ գերմանացին, ամերիկացին: Մեր ազգը վաղ թե ուշ մաքրելու է նրանց»: Իսկ հրդեհյան «Վելաթփարեզ» կայքէջը նշում է, որ Բարանը դերսիմցի քուրդ է: Նկատի ունենալով, որ Դերսիմը (Թունջելին) բնակեցված էր զազաներով, որոնք ալավիներ են, կարելի է ասել, որ Զեյնո Բարանը հոր կողմից զազա է: Ըստ երեւույթին նրա մայրը՝ Ֆյուսուն Մութլուն ծագումով հրեա է, որ «turkishamericanjournal.com»-ը Զեյնո Բարանին համարում է «սաբաթայական», այսինքն՝ առերեւույթ կրոնափոխ հրեա: Այս կայքէջին լրացնում է «haber7.com»-ը, ընդգծելով. «Ինչպես մեր արգործնախարարությունը, այնպես էլ ԱՄՆ պետքարտուղարությունը, ծագումով հրեաների գերիշխանության տակ է: Հրեա է նաեւ Բրայզան: Քանի որ արգելված է հրեա տղամարդու ամուսնությունն այլազգի հետ, ուստի առերեւույթ կրոնափոխ հրեա պետք է համարել նաեւ Զեյնո Բարանին»:

Ի դեպ, թուրքական մամուլը Զեյնո Բարանի ամուսնությանն անդրադարձել է «Թուրքիային խառնող Բարանն ամուսնացավ», «Ամեն քարի տակից այս կինն է դուրս գալիս», «Ազգի դավաճանների դավադրական ծրագիրը» եւ նման կարգի վերնագրերով: Մինչ այդ պետծառայողների արհմիությունների կոնֆեդերացիան, ինչպես այդ մասին հունիսի 27-ի համարում նշել է «Գյունդեն» թերթը, դատական գործ էր հարուցել Զեյնո Բարանի նկատմամբ, նկատի ունենալով հունիսի 13-ին «Հադսոն» ինստիտուտում կազմակերպված միջոցառումը:

Այստեղ քննարկվել էր Բարանի հեղինակած Ստամբուլում ահաբեկչական երկու պայթյուն նախատեսող սցենարը, որի համաձայն սպանվում էր 50 մարդ: Ի պատասխան դրան թուրքական զորքերը ներխուժում էին Հյուսիսային Իրաք: Ավելին, 2006 թ. «Նյուսուիքում» Զեյնո Բարանը կանխատեսում էր արել, որ 2007-ին թուրքական բանակը հեղաշրջում կկատարի երկրում՝ տապալելով Էրդողանի կառավարությանը:

Թուրքական մամուլը չարաբաստիկ կանխատեսման համար խստագույնս քննադատել էր Զեյնո Բարանին, իսկ սցենարը որակել «աղեսաբեր» Թուրքիայի համար: Այնպես որ, չի կարելի թուրքամետ համարել նաեւ Զեյնո Բարանին:

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակության ժե տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ
Երեւան 0010 Հանրապետության 47
Ֆաքս 374 10 562863
e-mail: azg@azg.am
azg2@arminco.com
www.azg.am
Գլխավոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՐԵՏԻՔԵԱՆ / հեռ 521635
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ 529221
Լրագրողների սենյակ / հեռ 581841
Համակարգչ. ծառայություն / հեռ 582483
Շտաբային լրահաւաք ծառայություն / հեռ 529353
Համակարգչային շարվածը «Ազգ» թերթի
Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով կամ ռադիոհեռուստատեսութեամբ առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատուութիւն չի կրում:
"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 10 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

ԱԶԳ

ԸՆԹԱՑԻԿ

Լեւոն Տեր-Պետրոսյանի առաջադրման մասին խոսակցությունները չեն դադարում: Վերջինը դրանց մասին խոսեց Մերուժան Տեր-Գուլանյանը՝ ասելով մի բան, որից կարելի է կարծիք կազմել, թե «Դե ֆակտո» ամսագրի խմբագիրը հաստատ մի բան գիտի: Իսկ որ իշխանական համակարգում որեւէ մոտակա գործընթացի մասին, որեւէ փոխխության վերաբերյալ ամենաուժեղ «նյուխ» (գուցե՝ տեղեկատվություն) ունեցողներից մեկը մամուլի այս հնաբնակն է, կարծում ենք, շատերն են համոզվել: Իսկ ինչ էր ասում նա. որ երկու մարդ իրավունք ունեն հավակնելու հանրապետության նախագահի պաշտոնին, որոնք իրենց կյանքով վաստակել են այդ իրավունքը. «Մեկը Սերժ Սարգսյանն է, մեկը Լեւոն Տեր-Պետրոսյանը, երկրորդին էլ մոտիկից ճանաչում եմ»: ՀՀԿ-ամերձ այս գործչի այս տեսակետից կարելի է հետեւություն անել, որ հանրապետական վերնախավի համար որպես երկրորդ թեկնածու ցանկալի է Տեր-Պետրոսյանը: Թե ինչու՝ դա այլ վերլուծության թեմա է: Ճիշտ է, Տեր-Գուլանյանը նշեց էլի ուրիշ իրավունք ունեցողների՝ Վազգեն Մանուկյանի, կամ օրինակի համար՝ Պարույր Հայրիկյանի մասին, գտնելով, որ երկրի համար առաջին երկու թեկնածուները ճիշտ կլինեն եւ չծածկելով, որ այս երկուսից ամենամեծ շանսն ունի՝ Սերժ Սարգսյանը («լայնախոհ է, վրեժխնդիր չէ, հայ տղա է, Հայաստանը հագած տղա է» եւ այլն): Իսկ թե ինչո՞վ է հարմար 10 տարի լռած, քաղաքական գործընթացներից դուրս մնացած մարդը, որի մտորումների մասին լայն հասարակությունը տեղյակ չէ, եւ նրա մոտեցումները հիշում է 10 տարի առաջվա նրա կառավարման ժամանակից՝ անհայտ է: Իսկ թե ինչ տարբերություն կա երկու՝ նույն գնացքով եկած քաղաքական գործիչների՝ Լեւոն Տեր-Պետրոսյանի եւ Վազգեն Մանուկյանի միջեւ, որ վերջինիս առաջինին համարժեք բարձրությամբ չդնեն՝ անհասկանալի է: Ճիշտն ասած՝ Մ. Տեր-Գուլանյանի մասին այդքան չէինք խոսի, եթե նրա նման իշխանությունից իշխանություն հաջողությամբ փոխադրված մարդկանց մի հսկա բազմություն գոյություն չունենար, ում նպատակահարմար է Տեր-Պետրոսյանի անունը շոշափելը: Սա անում են մի շարք կազմակերպություններ, մի շարք լրատվամիջոցներ՝ ոչ թե այն պատճառով, որ հասարակության մեջ այդպիսի պահանջարկ կամ խնդիր կա, այլ ընդհակառակը, այդպես կկարողանան էլ ավելի պառակտել առանց այդ էլ թայֆաների բաժանված ընդդիմությանը, թույլ չտալով որեւէ համախմբում, որեւէ միասնական ֆոնաս, քանի որ Տեր-Պետրոսյանին չընդունող ընդդիմության բավական մեծ զանգված կա, ով անհաշտ պայքարելու է այդ թեկնածության դեմ: Ու գիտակցված կամ անգիտակցաբար՝ Տեր-Պետրոսյանի առաջադրման հիպոթեզը ճամփորդում է քաղաքական դաշտով՝ նրա կողմնակիցներին ստիպելով անիմաստ վիրավորանքներ հասցնել իրենց ընդդիմադիր գործընկերներին, հակառակորդներին՝ նյարդայնանալ, իսկ մեծամասնական թեկնածու ունեցող իշխանական թեւին՝ հաջողությամբ ներդնել ընդդիմությանը պառակտող այս մի գործիքը: Ճիշտ է, մինչեւ այն պահը, երբ Տեր- Պետրոսյանը վերջապես հայտարարի իր մտադրության մասին՝ վերջն առաջադրվելո՞ւ է, թե ոչ: Չնայած վերջինիս էլ մեղադրել չի լինի՝ նրա համար էլ դժվար է կողմնորոշվելը՝ իր անհամբեր եւ իրականության զգացումը կորցրած թիմակիցների համառ պնդումների, արեւմուտքի՝ զանազան բնույթի հորդորների եւ իշխանական թիմից եկող տարբեր իմպուլսների միջեւ: Իսկ ինչո՞վ, օրինակ, Վազգեն Մանուկյանը, որ ծառայություններ է մատուցել երկրին, Ս. Սարգսյանի կամ Տեր-Պետրոսյանի չափ իրավունք չունի առաջադրվելու: Մեր կարծիքով՝ նա, հակառակը, իշխանությունից բաժանվել է՝ չարտահայտվելով եւ ժողովրդի մեջ իր անվան շուրջը բացասական իմիջ չձեւավորելով, 10 տարի եղել է քաղաքականության մեջ, եւ քաղաքական դաշտից ու հասարակությունից գաղտնիք չունի: Նույն կերպ այլ քաղաքական ուժեր եւ իշխանությունից, եւ ընդդիմությունից իրավունք ունեն եւ կարող են սեփական թեկնածուով հանդես գալ: Իսկ Լ. Տեր-Պետրոսյանի առաջադրման խոսակցություններն առաջ ընկած փիար ակցիա են հիշեցնում՝ որոշակի նպատակներով, ոչ ավելին: Թեեւ Վ. Մանուկյանի պարզաբանումներն այս բոլորի մասին վերջերս մամուլում եղել են, սակայն խնդիրն օր-օրի նորանում է, այնպես որ ստիպված էինք նորից դիմել նրան. «ՀՀՇ-ի հետ բանակցություններ չկան, ես հիմա չեմ քննարկելու ուրիշի ենթադրությունները, հասարակությունով պետք է քննարկեք այդ հարցը, ոչ թե ես քննարկեմ:

Հիմա ես նստեմ, Լեւոն Տեր-Պետրոսյանի մասին խոսեմ. գովազդում եք նրան՝ անընդհատ իրա մասին խոսելով: Ես մի անգամ ասել եմ էս վերջին շրջանում, թեկնածությունը կդնի՝ կխոսենք: Դեռ ընտրությունը չկա, պետք է ընտրական կոմպանիա լինի, ինչ-որ մտքեր ասվեն, կողը մարդիկ հավաքվեն կամ չհավաքվեն. հիմա զրույցի վիճակ է, խմորումներ կան, բայց դեռ խմոր չկա»:

Դատելով ամեն ինչից՝ ՀՀԿ համագումար, ՀՅԴ Գեղագույն ժողով սեպտեմբերի կեսերին, որոնք պետք է լուծեն պաշտոնական նախագահի թեկնածու առաջադրելու հարցը, շատերը կկողմնորոշվեն սեպտեմբերի վերջին՝ ուշ չէ. «Գիտեք ինչ, անկեղծ ասած նույնիսկ անցած տարի ուշ էր, բայց ասեմ, որ կոնկրետ մի ամիս առաջ էլ ուշ չէ, հանգամանքներից է կախված: Հիմա իրավիճակն այսպիսին է՝ բոլորը բոլորի հետ խոսում են, բայց լուրջ պայմանավորվածություններ չկան», ասաց Վ. Մանուկյանը՝ մի անգամ էլ նշելով, որ ԱԺՄ-ի եւ ՀՀՇ-ի միջեւ որեւէ կոնֆիդենցիալ բանակցություն չկա, ինչի մասին հասարակությունը տեղյակ չէ. «Իսկ Լեւոն Տեր-Պետրոսյանի մասին հարցն ուղղեք հասարակությանը, որովհետեւ դա կախված է հասարակությունից եւ ոչ թե ինձանից՝ իմ կարծիքն այստեղ երկրորդական է», եզրափակեց Վ. Մանուկյանը:

Խմորումներ կան՝ խմոր չկա

ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՖՈՏՈԼՈՒՐ

Ի դեմ՝ ՀՀԿ խորհրդարանական խմբակցության ղեկավար Կարեն Կարապետյանը, խոսելով Տեր-Պետրոսյանի շուրջը ստեղծված բեւեռի ձեւավորման մասին՝ նկատել է, թե այդ մասին կարելի կլինի խոսել միայն այն դեպքում, երբ Տեր-Պետրոսյանը առաջադրվելու վերաբերյալ հայտարարություն անի, իսկ մինչ այդ ընդդիմադիր քաղաքական ուժերի մեծամասնությունը ջուրը չտեսած չի բոբկանա... թիմակիցների ցանկությունը եւ ՀՀ առաջին նախագահի հաշվարկները ճիշտ չի լինի ամբողջությամբ նույնացնել:

Իսկ Շավարշ Քոչարյանի՝ մի փոքր ավելի վաղ արված եզրահանգմամբ՝ ընդդիմության մի մասի հույսը Տեր-Պետրոսյանի առաջադրմամբ իշխանական դաշտում ստեղծվող ճեղքն է:

Ինչպես տեսնում եք՝ Տեր-Պետրոսյանի առաջադրումը շատ շահերի է առնչվում:

Իսկ ո՞րն է նրա շահը:

ՄԵՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Խաչիկ Մանուկյանի ընտրությամբ...

1-ին էջից

Այնպես որ՝ մեծամասնաբար ՀՀԿական հայրենի կառավարության համար կրկնակի ծախսն այս ընտրատարածքում տասնյակ անգամ ավելի գործնական նշանակություն ունի, եւ ՀՀԿ-ական Խաչիկ Մանուկյանի հաղթանակը հեռուն նայող ակնարկ է: Իսկ «Ժառանգությունն» ասում է, ոչ միայն ասում, այլեւ պատշաճաբար հայտարարում է իր մամուլի քարտուղար Հովսեփ Խուրշուդյանի բերանով, «բոլոր իշխանական կողմնակիցները թիվ 15 ընտրատարածքում կայացած լրացուցիչ խորհրդարանական ընտրություններում կաշառել են ընտրողներին», ինքը՝ Ռաֆֆի Հովհաննիսյանն էլ հայտարարում է ամենատարբեր իրավախախտումների եւ իշխանական լծակների չարաշահումների մասին, սա բոլորիս համար ենթադրելի է, բայց առդեն ապացուցելու խնդիր: Եվ նույնիսկ ապացուցելը բնավ չի նշանակի, որ մինչեւ 20 հազար դրամ կաշառված մեր թալինցի ընտրողը կաշառքը չվերցնելու դեպքում հենց Ռաֆֆի Հովհաննիսյանին էր ընտրելու. Ռաֆֆին, մեր մեջ ասած, բոլորովին այլ ընտրագրքի էր ընկել, որտեղ զանազան ռեստորանների հետ (ընտրակաշառք, վարչական ռեսուրս, իշխող կուսակցությունից քաշվելու հանգամանք) գումարվել էր հայրենակցական ռեսուրսը. բոլոր դեպքերում թալինցիների մեծ մասը իրենց հայրենակից երկու հիմնական ֆավորիտներին էր գերադասելու, իսկ Ռաֆֆուն տրված հազար ձայնը համամասնական կարգի դեպքում է աշխատում միայն ու ողջ երկրի տարածքով ընդդիմադիր զանգվածի միագումարի ձեւաչափով: Այնպես որ հենց սկզբից պարոն Ռաֆֆի Հովհաննիսյանը սխալվում էր՝ մեծամասնական կարգով պայքարի մեջ մտնելով փողի, վարչական ռեսուրսի եւ տեղական հայրենասիրության հետ: Մնացյալն ավել-պակասի խնդիր է՝ անկախ շարժառիթներից, մի հազար ձայն ավել-մի հազար ձայն պակաս: Իսկ եթե ականջալուր լինենք ընդդիմության այն հատվածի ալիք-վերիծներին, թե «Ժառանգությանն» իշխանությունը «պոախոդ» է տվել դեպի խորհրդարան, կարելի է առհասարակ «ընտրություն» բառը որպես բազմիմաստ կամ անիմաստ բառ օգտագործել հայերենում:

Բոլոր դեպքերում հանրապետականն այս ընտրություններով հաջողված զինավարժություններ իրականացրեց՝ կասկածողներին ցույց տալով նախագահական ընտրություններին իր նախատրամադրվածության լրջության աստիճանը՝ ոչ ոքի ոչ մի զիջում:

ԱՐԳԻՇՏԻ ՎԱՐԴԱՆՅԱՆ

«Թալինի ընտրությունները համեմատաբար խաղաղ եւ հավասարակշռված մթնոլորտում են անցել»

Ուջանի ընտրատեղամասում ընդհարում է եղել

Թալինի թ. 15 ընտրատարածքում կիրակի անցկացված ընտրությունները, «Ընտրությունը ֆոնն է» հասարակական կազմակերպության (ՀԿ) գնահատմամբ, անցել է համեմատաբար խաղաղ եւ հավասարակշռված մթնոլորտում: Երեկ ժուռնալիստների միությունում հրավիրված մամուլի ասուլիսի ժամանակ Թալինի ընտրություններն այսպես գնահատեցին կազմակերպության նախագահն ու ներկայացուցիչները: Հիշեցնենք, որ թիվ 15 ընտրատարածքում մայիսի 12-ի խորհրդարանական ընտրությունների արդյունքում հաղթել էր Հանրապետական կուսակցության ներկայացուցիչ, գործարար Խաչիկ Մանուկյանը, որը սակայն հրաժարվել էր պատգամավորական մանդատից՝ պատճառաբանելով, թե իր ընտրվելու վերաբերյալ խոսակցությունները շատ են: Իսկ նոր նշանակված ընտրություններին մասնակցել են 6 թեկնածուներ՝ ՀՀԿ անդամ Խաչիկ Մանուկյանը, Թալինի քաղաքապետ, «Բարգավաճ Հայաստան» կուսակցության անդամ Մնացական Մնացականյանը, «Ժառանգություն» կուսակցության ղեկավար Ռաֆֆի Հովհաննիսյանը, Հայ հեղափոխական դաշնակցություն կուսակցության անդամ Գուրգեն Շահինյանը եւ երկու անկուսակցականներ՝ Էմին Կարապետյանն ու Վահագն Պետրոսյանը:

Նախնական տեղեկություններով, Թալինի թիվ 15 ընտրատարածքում անցկացված ընտրություններում 16120 ձայնով կրկին հաղթող է ճանաչվել մայիսի 12-ին ընտրված թեկնածուն՝ ՀՀԿ անդամ, գործարար Խաչիկ Մանուկյանը: ՀՅԴ-ական Գուրգեն Շահինյանի օգտին քվեարկել է 7248 մարդ, Ռաֆֆի Հովհաննիսյանի օգտին քվեարկել է 1220 մարդ, Թալինի քաղաքապետի օգտին՝ 1067 մարդ, անկուսակցականներ Վահագն Պետրոսյանի օգտին 96, Էմին Կարապետյանի օգտին՝ 518 մարդ: Հիշյալ ընտրատարածքում 60138 ընտրողներից ընտրությանը մասնակցել է 36394-ը, որոնց ձայների բաշխվածությունն էլ արդեն ներկայացրինք:

«Ընտրությունը ֆոնն է» ՀԿ նախագահ Հարություն Համբարձումյանը սկզբում հայտարարեց, որ ընտրությունները անցել են համեմատաբար խաղաղ եւ հավասարակշռված պայմաններում, հետո էլ թվեց իրենց արձանագրած խախտումները: Հասարակական կազմակերպության նախագահի ներկայացմամբ, 84 ընտրատեղամասերում մեկ կամ երկուական դիտորդներով իրենք հետեւել են միայն ընտրությանը եւ ոչ քարոզչությանը: Ընդհանուր առմամբ, կազմակերպությունը արձանագրել է հետեւյալ խախտումները՝ անօրինական քարոզչության, ընտրողների կամարտահայտման վրա անօրինական կերպով ներազդելու դեպքեր, ընտրատեղամասերում կողմնակի անձանց ներկայություն, ընտրակարգի խախտումներ, անօրինական քվեարկության, վստահված անձանց իրավունքների չարաշահման դեպքեր, տեղամասային անհարմարությունները, ինչպես նաեւ ընտրողների կուսակումներն ու արհեստականորեն ստեղծված հերթեր:

«Ազգի» հարցին, թե այդքան խախտումներ արձանագրելուց հետո ինչպե՞ս կարելի է ընտրությունները որակել խաղաղ եւ հավասարակշռված, Հարություն Համբարձումյանը պատասխանեց, որ ինչպես մայիսի 12-ի, այնպես էլ այս ընտրությունները նախորդներից «մեկ քայլ առաջ են», բացի այդ, «ինչ արել են, քարոզարշավի ժամանակ են արել, մինչեւ ընտրությունները»: ՀԿ-ի նախագահը մի ուշագրավ հայտարարություն էլ արեց՝ ըստ որի «Մենք շատ աշխատանք ունենք ընտրողների հետ իրականացնելու, որոնք վախենում են կաշառք տվողի օգտին չքվեարկելուց՝ մտածելով, որ կաշառք տվողը կկարողանա պարզել դա»: ՀԿ նախագահն ու փոխտնօրեն Խաչիկ Ոսկանյանը նշեցին, որ այդպիսի վերահսկման մեխանիզմ չկա եւ, որ մոտավորապես այսպես կարելի է մեկից կաշառք վերցնել, մեկ ուրիշի օգտին քվեարկել: Ինչեւէ, ՀԿ-ն կատարել է իր աշխատանքը՝ դիտարկելով ընտրության օրը:

ՀԿ ներկայացուցիչները տեղեկացրին, որ երեկ ժամը 14-ի դրությամբ ընտրություններին մասնակից թեկնածուներից որեւէ մեկը բողոքով հանդես չի եկել: Եվ չնայած «սահուն» անցկացված ընտրությանը, նախօրեին Ուջանում այնուամենայնիվ ընդհարում եղել է: Դաշնակցական թեկնածու Շահինյան Գուրգենի կողմնակիցների եւ ՀԿ-ի դիտորդի, ընտրատեղամասի հանձնաժողովի անդամների միջեւ ընդհարում է եղել: «Ընտրությունը ֆոնն է» ՀԿ-ի փոխտնօրենի խոսքով, «մեծ ընդհարում» չի եղել, իսկ միջադեպի պատճառն էլ եղել է ընտրահանձնաժողովից 50 մետր շառավղով հեռու կանգնելու զգուշացումը:

Երեկ թալինյան ընտրատարածքի ընտրությունների վերաբերյալ հայտարարություն էր տարածել թեկնածուներից Ռաֆֆի Հովհաննիսյանը՝ տեղեկացնելով, որ «էապես անազատ եւ անարդար պայմաններում» անցած ընտրություններն անցան պատմության գիրկը: Հանրապետության ղեկավարությունից հետագայում իր պարտականություններն ավելի լավ կատարելու հույս ակնկալելուց հետո Ռաֆֆի Հովհաննիսյանը շնորհավորել է հաղթող թեկնածու Խաչիկ Մանուկյանին:

Իհարկե, շատ զարմանալի կլիներ, եթե թալինյան ընտրությունների մասին այլ կարծիք ինչեր, երբ խորհրդարանական ամբողջ ընտրություններն էին գնահատվել «մեկ քայլ առաջ»: Առհասարակ, շատ տարօրինակ էր այս ընտրատարածքում վերընտրություններ անցկացնելը, դրա համար էլ բյուջեից գումար ծախսելը, քանի որ ոչ ոք երեւի չէր կասկածում, որ մեկ անգամ անցած ՀՀԿ-ական թեկնածուն երկրորդ անգամ էլ կհաղթի: Մեր երկրի ընտրական գործընթացներին հավանաբար այլ երանգ հաղորդելու նպատակով նշանակված այս ընտրություններում առավել հաստատական էր Ռաֆֆի Հովհաննիսյանի մասնակցությունը: Նրա մասնակցությունից եւ հավաքած ձայներից եւս կարելի է շատ եզրակացությունների հանգել:

ԳՈՀԱՐ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Տարեթերթ

Ի ՀՈՒՇ

Հենրիկ Լիլոյան՝ մարդ, լրագրող, դիվանագետ, պետական գործիչ

75-ամյակի առթիվ

Օգոստոսի 27-ին լրացավ լրագրող, դիվանագետ, պատմաբան, պետական ու հասարակական գործիչ Հենրիկ Ցոլակի Լիլոյանի ծննդյան 75-ամյակը: Մեկը, որ ակտիվ մասնակցություն է ունեցել հանրապետության 1960-90-ականների հասարակական-քաղաքական կյանքին, զգալի ավանդ ներդրել հայ լրագրության զարգացմանը, Հայաստանի միջազգային կապերի ընդլայնմանը, Հայրենիք-սփյուռք առնչությունների ամրապնդմանը:

Հենրիկ Լիլոյանը ծնվել է 1932 թ. օգոստոսի 27-ին Երևանում, հայկական հրաձգային դիվիզիայի տպա, ծնունդով կաղզվանցի Ցոլակ Լիլոյանի ընտանիքում: 1956 թվականին ավարտելով Երևանի պետական համալսարանը, աշխատանքի է անցնում «Կոմունիստ» հանրապետական պատանեաթերթի խմբագրությունում, երկու տարի եղել է թերթի սեփական թղթակիցը Նոր Բայազետի, Մարտունու եւ Բասարգեչարի շրջաններում: 1958-60 թթ. Հ. Լիլոյանը «Մեդիցինսկի ռաբոտնիկ» («Բժշկական աշխատող») միութենական թերթի Հայաստանի սեփական թղթակիցն էր:

1959 թ., երբ կազմավորվել էր Հայաստանի ժուռնալիստների միությունը, Հ. Լիլոյանը դրա հիմնադիր անդամներից էր, ընտրվել է վարչության անդրանիկ կազմի անդամ:

1961 թ. վերադառնում է «Կոմունիստ» օրաթերթի խմբագրություն: Այդ շրջանում լույս են տեսնում նրա մի շարք հրապարակումներ, ռեպորտաժներ (օրինակ, ժամանակին աղմուկ հանած «Մախանենգները»), որոնք նոր խոսք էին այդօրվա հայ լրագրության մեջ:

Հ. Լիլոյանը 1963 թ. աշխատանքի է հրավիրվում ՀԿԿ կենտկոմ: Այստեղ նա վարել է ինֆորմացիայի գծով հրահանգչի, հանրապետության այն տարիների ղեկավար Յակով Զարոբյանի օգնականի պատասխանները, այնուհետեւ սովորել Մոսկվայի հասարակագիտության ակադեմիայի ասպիրանտուրայում: Պատմագիտության թեկնածուի նրա ավարտաթեզը նվիրված էր 1904-14 թթ. հայ մամուլում ազգային հարցի պատմությանը:

Ուսումն ավարտելուց հետո վերադառնալով Երեւան, 1967 թ. Հ. Լիլոյանը նշանակվում է ՀԿԿ կենտկոմի արտաքին հարաբերությունների կապերի սեկտորի վարիչ, իսկ մի քանի ամիս անց՝ կենտկոմի ինֆորմացիայի եւ արտաքին հարաբերությունների նորաստեղծ բաժնի վարիչի տեղակալ: Այդ ստորաբաժանման ստեղծումը պայմանավորված էր հանրապետության միջազգային կապերի ընդլայնմամբ:

1970-75 թթ. Հ. Լիլոյանը դիվանագիտական աշխատանքի էր, նա Փարիզում ԽՍՀՄ դեսպանության առաջին քարտուղար էր: Թերեւս Ֆրանսիան աշխարհի միակ պետությունն էր, որ 1960-82 թթ. խորհրդային Միության դիվանագիտական ներկայացուցչությունում աշխատում էր Հայկական ԽՍՀ իշխանությունների երաշխավորած պատգամավոր: Փարիզյան 5-ամյա գործունեության ընթացքում ֆրանսահայ համայնքի ամենաարբեր շրջաններում մեծ հեղինակություն ձեռք բերեց Հ. Լիլոյանը, մեծապես նպաստեց հայրենիքի հետ գաղութի կապերի խորացմանը:

Հենրիկ Լիլոյանի նախաձեռնությամբ, նրա վարած բանակցությունների արդյունքում ու կազմած պատգամավորական գրության հիման վրա է, որ Հայաստանի կառավարությունը 1975 թ. մարտին որոշում կայացրեց Փարիզի Լուվրին նվիրաբերել մի խաչքար: Նրա ջանքերի շնորհիվ Հայաստան բերվեցին սփյուռքահայ մի քանի արվեստագետների ու ազգային հասարակական գործիչների ստեղծագործություններ ու արխիվներ, կազմակերպվեցին Ֆրանսիայում Հայաստանի տուրիզմի օրերը (1973 թ.) եւ հայ կինոյի փառատոնը (1975 թ.), անցկացվեցին հանրապետության մի շարք արվեստագետների, կատարողների ու ստեղծագործական կոլեկտիվների ցուցահանդեսներն ու հյուրախաղերը: Մատենադարան հանձնվեցին մի շարք արժեքավոր ձեռագրեր, պատմության պետական թանգարանին նվիրաբերվեց ֆրանսիական մեդալագործական արվեստի մեծարժեք հավաքածու: Իբրեւ Հայաստանի ոչ պատգամավորական դեսպան, Հ. Լիլոյանը Փարիզում հյուրընկալել է Արամ Խաչատրյանին ու Հովհաննես Բաղրամյանին, Վիլյամ Սարոյանին ու Վիկտոր Համբարձումյանին, Կոնստանտին Սիմոնովին ու Մարիետա Շահինյանին, Առնո Բաբաջանյանին ու Սերգեյ Միխալկովին: Բարեկամական սերտ կապեր է ունեցել Գառզուի, Ժանսենի, Գրիգոր Շլեյանի, Անրի Վերնոյի, Ռիշար Ժերանյանի, հայագետներ Սիրարփի Տեր-Ներսիսյանի, Ֆրեդերիկ Ֆեյդիի ու Ժան-Պիեռ Մահեի հետ: Հ. Լիլոյանի «թեթեւ» ձեռքով Հայաստան ուսանելու եկան ֆրանսահայ մի շարք երիտասարդներ: Նա մեծապես նպաստել է երջանկահիշատակ Վազգեն Ա Ամենայն հայոց կաթողիկոսի՝ Ֆրանսիա կատարած այցերի կազմակերպմանն ու անցկացմանը:

Գալով հայրենիք, Հ. Լիլոյանը կրկին աշխատել է ՀԿԿ կենտկոմի արտաքին հարաբերությունների բաժնում, իսկ 1982 թվականին նշանակվել Հայաստանի արտաքին հարաբերությունների տուրիզմի վարչության պետ (1984 թ.՝ գլխավոր վարչության պետ, հանրապետության կառավարության անդամ): Այդ տարիներին զբոսաշրջությունը դարձել է երկրի էկոնոմիկայի կարեւոր ճյուղ, առաջատար տեղ զբաղեցրել ԽՍՀՄ «Ինտուրիստ» համակարգում, մասնավորապես կառուցվել է երաժշտական կոմեդիայի թատրոնի նոր շենքը, որի շինարարությունը մշակութային օբյեկտներ կառուցելու միութենական արգելքի պայմաններում պատահաբար անվանվել է «Ինտուրիստի» կոնֆերենց-դահլիճ»:

Օգտվելով պատահնից՝ նա փորձում էր ընդլայնել հանրապետության դերն արտաքին հարաբերությունների կազմակերպման բնագավառում, որպես ազատել գաղափարախոսական, տնտեսական եւ այլ սահմանափակումներից ու կապանքներից, կազմակերպել տուրիստական ու ավիացիոն ընկերությունների հետ Հայաստանի անմիջական, ուղիղ կապերը: Դրա մասին են վկայում Հայաստանի ազգային արխիվում պահպանվող՝ Հ. Լիլոյանի բազմաթիվ զեկուցագրերը, գրությունները, ուրիշ փաստաթղթեր:

Երբ ողջ ԽՍՀՄ-ում լուծարվեցին արտաքին հարաբերությունների տուրիզմի հանրապետական գերատեսչությունները, Հ. Լիլոյանը տեղափոխվեց Հայաստանի հանրային գրադարան, որը նրա նախաձեռնությամբ՝ 1990 թ. հոկտեմբերին, հանրապետության նմանատիպ հաստատությունների թվում առաջինը վերանվանվեց Ազգային գրադարան:

Հետագա տարիներին պատասխանավարել է նորանկախ Հայաստանի արտաքին գործերի նախարարությունում, իբրեւ պատմադիվանագիտական բաժնի առաջին վարիչ ու «Դիվանագիտական հանդեսի» հիմնադիր-գլխավոր խմբագիր, իր լուման ներդրել երիտասարդ դիվանագետներ պատրաստելու գործում, դիվանագիտության պատմություն ու միջազգային հարաբերություններ առարկան դասավանդել Երեւանի «Հայաստան Ամերիկա» համալսարանում:

Հ. Լիլոյանի գրչին են պատկանում մի շարք գրքեր, մասնավորապես խորհրդային նշանավոր դիվանագետ Լեւ Կարախանի (Լեւոն Կարախանյան) կյանքին ու գործունեությանը նվիրված մենագրությունը, ճանապարհորդական նոթագրությունների ժողովածուն, «Վերածնված Հայաստանի մշակույթը» գիրքը, որ լույս է տեսել Ուկրաինայում, հայրենավոր հոդվածներ հայաստանյան (այդ թվում «Ազգ»), սփյուռքյան, ռուսաստանյան եւ օտար մամուլում: Դեռեւ անհիշ է Հ. Լիլոյանի կազմած դիվանագիտական հայերեն առաջին բառարանը:

Հենրիկ Լիլոյանի կյանքն ու գործը շարունակվում են Հայաստանի հանրապետության արտաքին քաղաքականության հաջողություններում, ազգային մշակույթի զարգացման գործում հայրենիք-սփյուռք օրեցօր ամրապնդվող կապերում:

Հայ դիվանագետի հիշատակը հավերժացված է հուշատախտակով, որը ՀՀ արտգործնախարարության միջնորդությամբ Երեւան քաղաքի խորհուրդը որոշել էր փակցնել մայրաքաղաքի Մետրոյ Մաշտոցի պողոտայի այն տան ճակատին, որ ապրել է Հ. Լիլոյանը: Ամեն տարի փետրվարի 10-ին Ռուսաստանի Դաշնության դիվանագիտական ծառայության աշխատողի օրը այստեղ ծաղիկներով գալիս են ՌԴ դեսպանն ու դեսպանության աշխատակիցները...

ԱՐԱՏՈՒՆԻ ՎԱՐԱՊԵՏՅԱՆ
ՀՀ ազգային արխիվի տնօրեն,
պատմագիտության դոկտոր

ԱՐՑԱԳԱՆՔ

Եթե Ամերիկային կարելի է...

«Ազգը» մի առիթով ԱՄՆ պետքարտուղարի տեղակալի օգնական, ԵԱՀԿ Մինսկի խմբի ամերիկացի համանախագահ Մեթյու Բրայզային համարել էր «էյախոս»: Բայց ելնելով մոսկովյան թերթերից մեկում ունեցած հարցազրույցից, դժվար է նրան սակավախոս անվանել: Գուցե լեզուն բացվե՞լ է: Սակայն այդ ընդարձակ նյութն առաջին հերթին ուշադրություն է գրավում իր... «անկեղծությամբ»: Ես հասկանում եմ, որ դիվանագետներն իրենց հրապարակային ելույթներում «քամամ» խոսք չեն սիրում, գերադասում են անորոշություններ, հանրահայտ ձեւակերպումներ եւ այլն, դրանց վերծանումները թողնելով ունկնդիրներին: Սակայն հիշյալ իմաստով Բրայզայի այս ելույթը գլուխգործոց է: Խոսակցության թեման Կոսովոյի եւ հետխորհրդային չճանաչված պետությունների իրավիճակի ընդհանրությունների ու տարբերությունների համադրումն է: Ընդսմին զգալի ուշադրություն է նվիրվել Ղարաբաղին: Եվ այստեղ «էյախոս» Բրայզան սենսացիոն զուգահեռ է անցկացրել Արցախի ու... ԱՄՆ-ի միջեւ: Ըստ նրա, ԱՄՆ-ն եւս հիմնադրել են անջատողականները (սեպարատիստները), որոնք XVIII դարում իրենց պայքարով հասել են այն բանին, որ ուրիշ պետություններ ճանաչել են այդ անկախությունը: Սակայն, շարունակում է Բրայզան, երբ Իսպանիայի նախկին գաղութներն աջակցություն են խնդրել իրենց անկախության խնդրում, ամերիկացիները մերժել են, ասելով, որ նրանց անկախությունը չի բխում իրենց շահերից: Բայց չէ՞ որ մենք ճանաչել ենք ձեր անկախությունը՝ ընդվզել են նրանք: Շնորհակալ ենք, պատասխանել են ամերիկացիները, բայց յուրաքանչյուր դեպք յուրովի մոտեցում է պահանջում (ահա՞ թե որտեղ է թաքնված շան գլուխը):

Անջատողական Ղարաբաղի ու ԱՄՆ-ի միջեւ անցկացված պատմական «ընդհանրությունից» ապշահար թղթակիցը փորձում է կոնկրետություն մտցնել եւ հետաքրքրվում է, թե Ղարաբաղի խնդրի հետ կապված ինչ փոխզիջումներ կարելի է սպասել երկրի ամբողջականության ու ազգային ինքնորոշման սկզբունքների հակամարտության ասպարեզում: Ամերիկացի դիվանագետը մտնում է իր տարերի մեջ, որ ճիշտ կլինի բառացի մեջբերել. «Դա առաջնորդների խնդիրն է: Ինքնորոշման իրավունքը կարող է հասնել մինչեւ անկախության ձեռքբերմանը կամ ինքնավարացմանը: Եվ ես, որպես միջնորդ եւ որպես դիվանագետ, չեմ կարող որոշել, թե ինչպիսի կարգավիճակ կլինի. դա իմ խնդիրը չէ: Գուցե ժողովրդի ներկայացուցիչներն աղագայում որոշեն, որ Ղարաբաղի համար լավ է անկախ լինելը: Կամ գուցե որոշեն, որ լավ է Ադրբեջանի մասը լինի անկախության շատ բարձր աստիճանով: Բայց դա իմ խնդիրը չէ»:

Կրկնում եմ, ամբողջ հարցազրույցը խճողված է այս կարգի անորոշություններով, եւ դրանցից հոգնած թղթակիցը մի քանի անգամ փորձում է կոնկրետացնել Կոսովոյի միջադեպը, հիշեցնելով, որ Պուտինը բացահայտ տարակարծիք է հայտնել, թե ինչու մեկին կարելի է, մյուսին՝ ոչ: Եվ նորից ոչ մի լուրջ հիմնավորում ԱՄՆ-ի միակողմանի մոտեցման համար:

Եթե Բրայզան ասեր, որ ամերիկացիներն ուզում են Կոսովոյում ռազմակայան կառուցել ու տեղակայել հակահրթիռային համակարգեր (ինչի մասին շատ են գրում ռուսական թերթերը), նրան կարելի էր հասկանալ: Բայց նույն տարտամությունները. «Մենք չենք ասում, թե չի կարելի, մենք ասում ենք, որ պետք չէ: Դա չպետք է լինի, բայց չի արգելվում: Եթե ինչ-որ մեկն ուզում է, որ Կոսովոն դառնա նախադեպ, ապա հենց նախադեպ էլ կլինի այդ մարդու համար: Ես պարզապես չեմ տեսնում տրամաբանություն. եթե անջատականների մի խումբը ձեռք է բերում անկախություն, ապա աշխարհում անջատականների բոլոր խմբերը եւ մինչեւ աշխարհի վերջը կստանա՞ն անկախություն: Դրանք տարբեր իրավիճակներ են: Այլապես ինչո՞ւ ենք բանակցում Ղարաբաղի շուրջը, եթե Ղարաբաղի խնդիրը կարող է լուծվել Կոսովոյի նմանությամբ»:

Անկեղծ ասած, ես ուշադիր հետեւում եմ ռուսական մամուլում օտարերկրացի հեղինակների նյութերին եւ փորձում եմ իրոք հասկանալ, թե ինչո՞ւ նպատակահարմար է քրիստոնեական Եվրոպայում ուղղափառ Սերբիայից կտրել նրա ամենապատմական երկրամասը եւ այնտեղ ստեղծել ռազմատենչ, մաֆիանենգ ու քրեական մոնուլմանական պետություն, իսկ մի այլ քրիստոնյա ժողովրդի զրկել անկախության իրավունքից: Ցավոք, ավելի շատ հանդիպում ես բրայզայական ոճի անհամ սեթեւեթումների: Ոչ մի խոսք նաեւ Կոսովոյի բաժանման մասին:

Մնում է միայն մի միտք հուշել. ամերիկացի դիվանագետի հերթական երեւանյան այցի ժամանակ նրան պետք է հիշեցնել, որ ղարաբաղցիները ոչինչ անօրինական չեն պահանջում, այլ սոսկ հետեւում են աշխարհի «ամենադեմոկրատական» երկրի՝ ԱՄՆ-ի օրինակին:

ՌՈՒԲԵՆ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ
Մոսկվա

ԱՄՆ

Սուրճ խմելիս հայտնաբերում է բանկոմատի ավազակներին

Ֆիլադելֆիայի Թրեդիֆրին շրջանի ոստիկանությունը երկու հայերի (Արթուր Գրիգորյան եւ Արթուր Հարությունյան) է ձերբակալել բանկոմատներից կատարած դրամատարության մեղադրանքով, NBC10 լրատու գործակալության հաղորդումների հիման վրա տեղեկացնում է «Արմինյն միրոր սփեքթեյթր» շաբաթաթերթի օգոստոսի 18-ի համարը:

Նրանք բանկոմատներից անձնական տեղեկություններ ու փող էին կարողանում գողանալ առանց զոհի քարտը իրենց ձեռքում ունենալու: Գաղտնի ծառայություններն ու ՀՊԲ-ն երկու ամիս որոնում էին նրանց: Հավանական կասկածյալների նկարները ուղարկվել էին բոլոր ոստիկանական բաժանմունքներին: Վերջերս «Սփր մերիոն» բաժանմունքի աշխատակից Դելկան Քոյլը «Քինգ ըվ պրաշա ուավա» բարում առավոտյան իր սուրճն ըմպելիս տեսնում է Գրիգորյանին բանկոմատի մոտ գործառնություններ կատարելիս: Բանկոմատների մոտ տեղադրված հատուկ սարքերը, որոնք գրանցում են PIN համարները, հատատում են կասկածները:

Ըստ նախնական տվյալների, նրանք օրական մոտ 800 դոլար են կարողացել գողանալ մոտ 50-ի հասնող իրենց զոհերից: Ընդհանուր առմամբ 500 հազար դոլարի հասցնելով գողացված գումարը միայն հունիս-հուլիս ամիսներին:

Ըստ ոստիկանության, գումարը կարող է շատ ավելի մեծ լինել, քանի որ կասկածներ կան, որ ավազակախումբը գործել է 2005-ից, մի նահանգից մյուսը տեղափոխվելով:

Գրիգորյանը Կալիֆորնիայից է, բայց մնում էր, ըստ թերթի հաղորդման, տեղական հյուրանոցներում, որոնցից վերջինը եղել է «Ուեյն» հյուրանոցը Ուեյնում: Իսկ Հարությունյանը վերջին երեք տարիներին ապրել է Քինգ ըվ Պրաշայի «Դը ֆալբ փայի» վրա: Երկուսն էլ այժմ գտնվում են Մոնթգոմերի օկրուգային բանտում:

Ոստիկանությունը խորհուրդ է տվել օգտվել ավելի շատ կրեդիտային քարտերից:

Հ. Ծ.

Հիմա էլ վրացի «լրտեսներ» Հարավային Օսիայո՞ւմ

Վրաստանը Ռուսաստանից պահանջում է «չգինել աբխազ անջատողականներին»

Վրաստանի արտգործնախարարությունը մեղադրում է Ռուսաստանին «անջատողական ռեժիմներին աջակցություն ցուցաբերելու համար՝ պահանջելով դադարեցնել աղակառուցողական գործողություններն ընդդեմ Վրաստանի»: Նման հայտարարության համար վրացական կողմը որպես հիմք է ներկայացնում «Աբխազիայում անցկացված ռուսական զորավարժանքները»: Ըստ այդմ, Վրաստանի արտաքին գործերի գերատեսչությունն իր բողոքն է բարձրաձայնում ընդդեմ «Ռուսաստանի Դաշնության կողմից անջատողականների անօրինական ռազմական միավորումներին սպառազինություն եւ ռազմական տեխնիկա մատակարարելու, եւ Ռուսաստանի զինված ուժերի սպաների անմիջական ղեկավարությամբ նույն անջատողականների ուսուցման դասընթացներ անցկացնելու»:

Վրաստանի ԱԳ նախարարության հայտարարության մեջ հիշատակվում են «նաեւ երկրի օդային տարածքի բազմակի խախտումները», եւ այս առնչությամբ վրաց արտգործնախարարությունը մտահոգություն է հայտնել ոչ միայն Վրաստանում, այլեւ հարավկովկասյան տարածաշրջանում իրավիճակի աղակայունացման վտանգի առումով: Սովորույթի համաձայն, հայտարարության մեջ կոչ է ուղղված միջազգային կառույցներին՝ Ռուսաստանի վրա ճնշում բանեցնելու, որոշ միջոցներ ձեռնարկելու կաղակցությամբ:

Մինչդեռ շատ ավելի հետաքրքրական է, որ վրաց-ռուսական հարաբերություններում վերջին խնդրահարույց միջադեպի հիմնական պատճառ ներկայացվող հարավօսական-վրացական հակամարտության հնարավոր կարգավորման խափանումը մեկ այլ որակում է ստանում: Նախապես Վրաստանի օդային տարածքը «ռուսական ինքնաթիռներով խախտելու եւ ռումբ նետելու» միջադեպը հիմնականում պատճառաբանվեց, թե այդօրինակ «բեմականացումը» վրացական կողմի նախաձեռնությամբ նպատակ էր հետապնդում խափանելու Հարավային Օսիայի հարցի քննարկումը, որ սպասվում էր մոտ օրերին Թբիլիսիում:

Այս անգամ որակում տալիս թերեւս օգտվել են արդեն օգտագործված սցենարից, որ հաջորդեց ռուս-վրացական հարաբերությունների պատմության մեջ վրացական գինուն «տրված հարվածով»: Խոսքը ռուս զինվորականների ձերբակալության մասին է, որոնց վրացական կողմը լրտեսության մեղադրանք ներկայացրեց: Օրերս «լրտեսական» պատմություն են հեղինակել հարավօսական իշխանությունները՝ (բնականաբար) մեղադրելով վրացական կողմին: Օգոստոսի 26-ին Հարավային Օսիայում ձերբակալվել են Վրաստանի երեք քաղաքացիներ, այդ թվում՝ 13-ամյա մի երեխա, որոնց լրտեսության մեղադրանք է ներկայացվում:

Նման պարագայում բնավ էլ արդեն կարեւոր չէ, թե իրականում որ երկրի քաղաքացին ինչով է զբաղվում, այլ ստացվում է, որ անհրաժեշտության դեպքում ուզածդ քաղաքացուն կարող են լրտեսության մեջ մեղադրել եւ դրա դեմ ոչինչ անել չես կարող: Ամեն դեպքում, ինչպես եւ սպասելի էր, հարավօսական իշխանությունները «բարի կամք» են դրսեւորել արդեն երեկ ու հայտարարել, թե պատրաստ են մոտ ապագայում վերադարձնել լրտեսության մեջ մեղադրվող ձերբակալված քաղաքացիներին:

ԱՂԱՎՆԻ ՀԱԲՈՒԹՅՈՒՆՅՈՒՆ

ԿԺԴՀ-ն ամրացնում է ՉԺՀ սահմանը

Կիմ Չոն Իրի տարագիր որդին վերադարձել է

Հյուսիսային Կորեան սկսել է արգելափակոցներ կառուցել Չինաստանի սահմանի վրա, որպեսզի կանգնեցնի կորեացի փախստականների արտահոսքը: Այդ մասին հաղորդում է հարավկորեական Յոնհապ գործակալությունը, վկայակոչելով սահմանային Յալուցզյան գետի ափերին ապրող չինացիներին:

Վերջիններիս խոսքերով, հյուսիսկորեացիները սահմանի երկայնքով կանգնեցնում են փայտարերի սյուներ: Արգելապատը կառուցվում է 10 կիլոմետրանոց այն հատվածում, որտեղով փախստականներն ամենից հաճախ են հատում սահմանը:

ԿԺԴՀ-ին օգնելու նպատակով հիմնված հարավկորեական «Գուդ Ֆրենդս» մարդասիրական կազմակերպությունը մայիսին հաղորդել էր, որ դիտարկման տեսախցիկներ են տեղադրվել ԿԺԴՀ-ՉԺՀ սահմանի երկայնքով:

Անցյալ տարի սահմանային արգելափակոցներ կառուցել էր չինական կողմը: Հյուսիսկորեական պարիսպը զուգահեռաբար կառուցվում է սահմանի միեւնույն հատվածում:

Վերջին տարիներին ԿԺԴՀ տասնյակ հազարավոր քաղաքացիներ փախել են երկրից, որպեսզի փրկվեն սովից եւ իշխանությունների հալածանքներից: Փախստականները Չինաստանով հաճախ անցնում են Մոնղոլիա եւ Հարավարեւելյան Ասիայի երկրներ: Ավելի քան 10 հազար հյուսիսկորեացիներ ապաստան են գտել Հարավային Կորեայում:

Միաժամանակ հաղորդվում է, որ տարիներ տեւած տարագրությունից հետո արտերկրից ԿԺԴՀ է վերադարձել երկրի ղեկավար Կիմ Չոն Իրի ավագ որդին՝ Կիմ Չոն Նամը: Այդ մասին տեղեկացնում է հարավկորեական «Չոսուն Լիբո» թերթը, վկայակոչելով հատուկ ծառայությունների աղբյուրներ:

36-ամյա Կիմ Չոն Նամը հայրենիք է վերադարձել դեռ հունիսին եւ ներկայումս բարձր պատասխան է զբաղեցնում կառավարող բանվորական կուսակցությունում: Նրան ենթարկվում են մասնավորապես կուսակցական, բանակային եւ կառավարական որոշ կառույցներ:

Հարավային Կորեայի ազգային հետախուզական ծառայությունը, սակայն, պատասխան չի հաստատում այս տեղեկությունները: Կիմ Չոն Նամի տարագրությունն սկսվել էր 2001 թ., երբ Ճապոնիայում նրան ձերբակալել էին կեղծ անձնագրով երկիր մուտք գործելու փորձի համար: Դրանից հետո նա բնակություն էր հաստատել ՉԺՀ հարավում՝ ինքնավար տարածք Մակաոյում:

Փորձագետները կարծում են, որ ԿԺԴՀ ղեկավարի ավագ որդու վերադարձից հետո երկրում սրվել է իշխանության պայքարը, քանի որ Կիմ Չոն Նամը կարող է դառնալ Կիմ Չոն Իրի իրավահաջորդը: Հարկ է նշել՝ որ Կիմ Չոն Նամի մայրը ԿԺԴՀ ղեկավարի երկրորդ կինն է, բայց առայժմ սուրբ հայտնի չէ, նրանց ամուսնական հարաբերությունները պատասխանատես են մոտ ապագայում վերադարձնել լրտեսության մեջ մեղադրվող ձերբակալված քաղաքացիներին:

10 ձերբակալություն Պոլիտկովսկայայի սպանության գործով

Սպանված լրագրողների թվով ՌԴ-ն երկրորդ տեղում է

Ռուսաստանի գլխավոր դատախազ Յուրի Չայկան երեկ նախագահ Վլադիմիր Պուտինին զեկուցել է, որ լուրջ առաջընթաց է արձանագրվել «Նովայա գազետայի» մեկնաբան Աննա Պոլիտկովսկայայի սպանությանն առնչվող գործում: Չայկայի խոսքերով, արդեն ձերբակալվել են 10 անձինք, որոնց մեղադրանքներ կներկայացվեն «ամենամոտ ժամանակներս»:

2006-ի նոյեմբերին Մոսկվայում իր տան մոտ Պոլիտկովսկայայի սպանվելը քննիչները նախապես շաղկապել էին Չեչնիայի վարչապետ Ռամզան Քադիրովի հետ, որին լրագրողը խստիվ քննադատել էր իր հոդվածներում: Բայց հետագայում գերիշխող էր դարձել այն վարկածը, ըստ որի սպանությունը կարող էր լինել Նիժնեվարտովսկի ՆԳՎ նախկին սպաների վրեժխնդրության հետեւանքը: Չեչնիայում զինվորականների հանցագործությունները քննած լրագրողուհին հասել էր այն բանին, որ Նիժնեվարտովսկի ՆԳՎ սպաներից մեկը դատապարտվել էր 11 տարվա բանտարկության, երկու ուրիշներ հայտնվել էին միջազգային հետախուզման մեջ, վեց ուրիշներ դարձել էին կասկածյալներ:

Լրատվության անվտանգության միջազգային ինստիտուտի հաշվարկների համաձայն, ԽՍՀՄ-ի փլուզումից ի վեր Ռուսաստանում զոհված լրագրողների թիվը հասնում է 219-ի: Վերջին 10 տարում սպանված լրագրողների թվով (88) Ռուսաստանը հայտնվել է աշխարհում 2-րդ տեղում: Առաջին տեղում Իրաքն է (138), երրորդ տեղում՝ Կոլումբիան (72):

Պ. Ք.

Մալիքին դժգոհ է ԱՄՆ-ից եւ Ֆրանսիայից

Իրանում շիա, սունի եւ քուրդ առաջնորդները հաշտվել են

Իրաքի վարչապետ Նուրի ալ Մալիքին մամլո ասուլիսում ամերիկացի զինվորականներին դատապարտել է խաղաղ իրաքցիների ձերբակալությունների եւ սպանությունների համար: «Իրաքի կառավարությունը թույլ չի տա կալանավորել անմեղ քաղաքացիներին», հայտարարել է վարչապետը, ամերիկացիներին խորհուրդ տալով վերանայել նաեւ Իրանում գտնվող իրանցիների հետաքննման մեթոդները:

Մալիքիի աննախադեպ դժգոհության պատճառը, թերեւ, ամերիկացի որոշ կոնգրեսականների ննջադասական ելույթներն են, որոնք օրերս հանդես էին եկել Իրաքի վարչապետին փոխելու կոչերով: «Նրանք չեն հարգում Իրաքի ինքնիշխանությունը, ասես ամերիկյան գյուղերից մեկը լինի», վրդովմունքով հայտարարել է Մալիքին:

Նա միաժամանակ դատապարտել է Ֆրանսիայի արտգործնախարար Բեռնար Կուշների վարքագիծը եւ նրանից պահանջել է ներողություն խնդրել: Անցյալ շաբաթ Բաղդադ կատարած այցելությունից հետո Կուշներն ասել էր, թե Իրաքի կառավարությունն «անարդյունավետ է աշխատում» եւ ԱՄՆ պետքարտուղար Կոնդոլիզա Ռայսին խորհուրդ էր տվել Մալիքիի փոխարեն վարչապետ նշանակել փոխվարչապետ Աբդել Մահդիին:

«Փարիզն անցյալում սերտ կապեր է ունեցել Սադդամ Հուսեյնի վարչակարգի հետ եւ հիմա էլ օգնում է նրա կամակատարներին», հայտարարել է Մալիքին:

Վարչապետն ամերիկացի եւ ֆրանսիացի քաղաքական գործիչներին խնդրել է միջպետական հարաբերություններում հարգել տարական վարքականոնները:

Դիտորդները Մալիքիի խիստ ելույթը բացատրում են նրա դիրքերի ամրապնդմամբ: Մասնավորապես Բաղդադում կիրակի օրն ավարտված քաղաքական խորհրդակցությունում շիա, սունի եւ քուրդ համայնքների առաջնորդները պատրաստություն են հայտնել վարչապետին: Այդ մասին մամլո ասուլիսում հայտարարել է ինքը՝ ալ Մալիքին:

Ակնկալվում է, որ Իրաքի երեք գլխավոր համայնքների «առաջնորդների ձեռք բերած հաշտությունը կարետոր քայլ կդառնա բոլոր իրաքցիների ազգային հաշտության ճանապարհին»:

Իրաքում օրախնդիր քաղաքական հարցերի թվում են նահանգների օրենսդիր մարմինների ընտրությունների անցկացումը եւ Սադդամ Հուսեյնի «Բաաս» կուսակցության նախկին անդամների մասնակցությունը պետական մարմինների աշխատանքին եւ ծառայությունը բանակում:

BBC-ն ընդգծում է, որ շիա Մալիքիից բացի, մամլո ասուլիսին մասնակցել են Իրաքի նախագահ Ջալալ Թալաբանին (քուրդ), փոխնախագահ Թարիք Հաշեմին (սունի), փոխվարչապետ Աբդել Աբդուլ Մահդին (շիա) եւ քրդական տարածքի ղեկավար Մասուդ Բարզանին:

Հունաստանը 1 մլն եվրո կտա հրձիգների հայտնաբերման դիմաց

Օլիմպիան հաջողվել է փրկել

Հունաստանի իշխանությունները վստահ են, որ շոգ եղանակի եւ քամու պայմաններում երկրում ուրբաթ օրվանից բռնկված հարյուրավոր անտառային հրդեհների զգալի մասը հրձիգների գործն է: Ֆրանսպրեսը հաղորդում է, որ հրկիզման կասկածանքով արդեն ձերբակալված են 10 անձինք, այդ թվում 65-ամյա մի տղամարդ եւ մի տարեց կին: Իսկ երկու չարամիտ հրձիգների հաջողվել է փախուստի դիմել մոտոցիկլետով:

Պելոպոնես թերակղզու մի շարք լեռնային գյուղեր տարբեր կողմերից շրջապատված են հրդեհներով: Երեք օրում վառվել է 500 տուն, ոչնչացված են տասնյակ հեկտարներով անտառներ եւ գյուղատնտեսական հանդակներ: Զոհվել են տասնյակ մարդիկ, շատերն այրվածքներ են ստացել: Կան անհետ կորածներ:

Կառավարությունը շաբաթ օրն արտակարգ դրություն է հայտարարել երկրի բոլոր շրջաններում: Հրդեհների զոհերի հիշատակին Հունաստանում սուգ է հայտարարված:

Երկրի հեռուստատեսության հաղորդումների համաձայն, կիրակի օրը հրդեհից հաջողվել է փրկել մարդկային քաղաքակրթության գլուխգործոցներից մեկը՝ ՅՈՒՆԵՍԿՕ-ի հուշարձանների ցանկում ընդգրկված հնօրյա Օլիմպիան: Առաջին օլիմպիական խաղերի անցկացման վայրը թանգարանային համալիր է, որը համանուն գյուղի մոտակայքում է: Հրդեհների պատճառով հուշարձանի շրջակա գյուղերի բնակիչները տարհանվել են, հրշեջներին հաջողվել է փրկել թանգարանային համալիրը:

Հրձիգների որոնման պատճառն այն է, որ հայտնաբերվել են գազի բալոններով սարքված մի քանի ինքնաշեն մեխանիզմներ եւ բենզինի մեջ թաթախված կիսայրված փալասներ: Բջջային հեռախոսով ապված մի տեսագրության վրա երեւում են երկու հրձիգների գործողություններն Աթենքի արվարձանում՝ Իմիտոս լեռան շրջանում: Կառավարությունը մինչեւ 1 մլն եվրո է խոստանում հրձիգների հայտնաբերման օժանդակողներին:

Վերջին տեղեկությունների համաձայն, կրակն սպառնում է եւս մեկ անտիկ հուշարձանի՝ մ. թ. 5-րդ դարում կառուցված Ապոլլոնի տաճարին: Պելոպոնես թերակղզում եւ Էվբես կղզում տարհանվել են 40 գյուղերի բնակիչներ, որոնք ժամանակավորապես մնում են վրաններում:

Հրդեհների մարման աշխատանքներին մասնակցում են 1000-ից ավելի հույն հրշեջներ ու 425 զինվորականներ: Կաղադան, Ռուսաստանը, եվրոպական մի շարք երկրներ ուղարկել են հատուկ օդանավեր՝ իրենց անձնակազմերով:

Պ. Ք.

ԱԶԳ

Մշակույթ

Պատմության արահետներով

Օրերս լույս տեսավ բանասիրական գիտությունների թեկնածու, բանաստեղծ եւ արձակագիր **Ժաննա Հակոբյանի «Ղարաբաղի ճակատագիրը»** պատմավեպը, որի նյութը վերցված է 18-րդ դարում օսար բռնատեսության դեմ Արցախի հայության մղած ազգային ազատագրական պայքարի պատմությունից: Նա առաջին կին-պատմավիպասանն է մեր գրականության մեջ: Կարծում ենք՝ գիրքը հրատարակվել է ճիշտ ժամանակին, քանի որ պատմավեպի առանձնահատկություններից մեկն այն է, որ պատմական էական նշանակություն ունեցող դրվագների միջոցով առաջ է քաշվում տվյալ հասարակությանը հուզող, արդիական խնդիրներ: Այս օրերին էլ, երբ Թուրքիան ոչ միայն չի կամենում ընդունել հայոց ցեղասպանությունը, այլեւ Ադրբեջանի հետ առաջ է քաշում ազատագրված տարածքների հետ վերադարձնելու խնդիրը, ու շարունակ ձգձգվում է Ղարաբաղի կարգավիճակի հարցը: Հեղինակի նպատակն է իր վեպի միջոցով կրկին ապացուցել, որ Ղարաբաղը միշտ էլ լինելով Հայաստանի անբաժանելի մասը, դարեր ի վեր ստիպված է եղել պայքարել օսար զավթիչների դեմ: Իսկ թե ինչպես են առաջին անգամ թուրքերը հայտնվել Ղարաբաղում եւ ինչպիսի խաղաղություն է տարվել դեռ այն ժամանակներում, այդ հարցերի պատասխանները կարող ենք գտնել այս գրքում: Վեպը կառուցվել է պատմական ճշգրիտ փաստերի հիման վրա: Սյուժեի հիմքում ընկած են համեմատաբար ոչ մեծ ժամանակահատվածի իրադարձությունները (1787-1797թթ.): Որպես հիմնական աղբյուր են ծառայել Ռաֆֆու, Լեոյի աշխատությունները: Սակայն նա ձեռի տակ են հայտնվել հիշյալ պատմաբանների կողմից չհայտնաբերված նյութեր (Ս.Ն.Ներսեսով, Հ.Շուբեցի), որոնք պարսկերենից հայերեն են թարգմանել արդեն մեր օրերում: Հեղինակը նաեւ անվերջ ճնշության է առել կոնկրետ դարաշրջանին վերաբերող նյութերը՝ օգտվելով գրադարաններից, Մատենադարանի կաթողիկոսական մատյաններից, մատենագիտական հարակից նյութերից (ռուսական, վրացական): Այսպիսով, Հակոբյանին հաջողվել է գեղարվեստական խոր ընդհանրացման հասնել՝ արտացոլելով դարաշրջանի տիպական առանձնահատկություններն ու մարդկային բոլոր հարաբերությունները: Ազատ լինելով պատմական անցքերը վերաիմաստավորելու իր ստեղծագործական երեւակայության մեջ՝ նա ունչ ու հոգի է տվել պատմական անցքերին ու դեմքերին: Ստեղծելով հոգեբանական յուրօրինակ խորություն ու մտածելակերպ ունեցող բազմապիսի կերպարներ (թուրք խաներ, հայ մելիքներ, զորավարներ, եկեղեցականներ, գյուղացիներ, կանայք), ներկայացրել է նրանց նիստուկացը, տարազը, սովորությունները: Յուրաքանչյուր հերոս ունի իր ճակատագիրն ու աշխարհայացքը: Բոլոր հերոսներն էլ առնչվում են պատերազմի հետ եւ գրողի տեսանկյունից մարդը գնահատվում է միմիայն պատերազմին ունեցած իր մասնակցությամբ: Վեպում պատկերված ռազմի տեսարանները խորապես կրում են ժամանակի ոգին: Տրված են նաեւ Ղարաբաղի բնության, հայտնի եկեղեցիների (Գանձասար, Ամարաս, Գտչավանք եւ այլն) նկարագրությունները եւ նրանց ստեղծման պատմությունը: Էական է նաեւ ղարաբաղյան բարբառի, ժողովրդական ասացվածքների, իմաստուն արտահայտությունների ճաշակով ու տեղին օգտագործումը խոսքի մեջ:

Գրքում ուրույն տեղ ունեն սիրային տեսարանները: Սիրահարվում են ինչպես մելիքները, այնպես էլ հասարակ մարդիկ, եւ ընթերցողն ականատես լինելով նրանց անկեղծ խոհերին ու հոգեկան լարումներին՝ ինքնըստինքյան լցվում է անանուն մի կարոտով (տես՝ «Թաքուն սիրո տվայտանքները», «Պատիժ սիրո դիմաց», «Հավերժությունն էլ ինձ չի հերիքի», «Պատերազմները չնչին են սիրո կողքին», «Աղավնու հայտնության խորհուրդը» գլուխները):

Պատմավեպի սյուժեն միագիծ չէ: Ղարաբաղի հինգ մելիքություններին զուգահեռ պատկերված են ռուսական, վրացական արքունիքների, Երեւանի եւ Գանձակի խանությունների կյանքի նկարագիրը: Ի դեպ, եթե հայրենասեր հերոսների նպատակն էր Ղարաբաղի անկախ մելիքությունների վերականգնումը, օսար բռնատեսներից ազատագրված հայրենի հողի պաշտպանությունը, ապա, ընդհակառակը, թշնամիների ու դավաճանների ցանկությունն էր ավելի մասնատելու երկիրը: Եվ օսար զավթիչների դեմ մղվող հերոսամարտերում ոչ միայն շողում է ղարաբաղցի զինվորի դյուցազնական սուրը, այլեւ պակաս կարեւոր չէ հեղինակի հայրենանվեր խոսքը (տես՝ «Հերակլ արքայի արշավանքը», «Հաղթանակ ասպալույսի ներքո», «Դամոկլյան սուր Ղարաբաղի վրա», «Մելիք Մեջլումի մահը» եւ այլն): Ցավոք, վեպում ընդգրկված ժամանակաշրջանը բավականին տխուր ու ծանր ժամանակահատված էր Ղարաբաղի համար, քանի որ 18-րդ դարի երկրորդ կեսից մելիքները անգամ կորցրել էին իրենց կիսանկախ վիճակը եւ երկրում տիրում էր երկպառակությունը ինչպես մելիքությունների, այնպես էլ կաթողիկոսների շրջանակներում: Ահա ինչու թշնամուն հաջողվում էր քայլ առ քայլ ավերել Ղարաբաղը: Հեղինակի հիմնական նպատակն է մատնանշել, թե ինչպիսի աղետներ է բերել մասնատվածությունը մեր ազգին: Ուստի շրջապատված լինելով թշնամիներով՝ մեզ անհրաժեշտ է միավորվել, այլ ոչ թե ախոյաններ փնտրել մեր մեջ: Հետեւաբար, այստեղից էլ դասեր պիտի քաղենք: Այդ դասերից կարեւորն այն է, որ յուրաքանչյուր ազգ իր ազատությունը նվաճում է սեփական ուժերով, միաբանությամբ: Ժաննա Հակոբյանի վիպական աշխարհի գաղափարական ենթատեքստը շրջված եւ ուղղված է ներկային: Ահա ինչպես է վեպի գլխավոր հերոս մելիք Մեջլումը իր որդուն՝ Հաթամին խրատներ տալիս. «...Իմացած եղի՛ր, որ հայերն ամեն ինչով հանդերձ, խաղաղասեր են, սակայն պատերազմելիս կրկնակի քաջ են, աներկյուղ, կրնասեր: Ու մենք, անշուշտ, մի օր անպայման կհաղթենք, քանզի Իբրահիմ խանին չտպալել՝ կնշանակի մահվան դատապարտել ողջ Ղարաբաղի ժողովրդին: Եթե մեզ չհաջողվի իրականացնել մեր իղձը, այդ ծանր պարտականությունը կընկնի քո եւ քո հետնորդների ուսերին: Մշտապես հիշի՛ր, որ յուրաքանչյուր հայ երիտասարդ իրեն պատասխանատու պիտի զգա հարազատ ժողովրդի առաջ: Հետեւաբար, դուք ձեր նախապապերի, պապերի, հայրերի օրինակով պարտավոր եք ցմահ սուրը պայծառ չդնել...»:

Պատմավեպը կարդացվում է մեծ լարվածությամբ ու հետաքրքրությամբ՝ մեկ շնչով: Հուսանք, որ այն կդառնա այսօրվա ընթերցողի գրասեղանի սիրված գրքերից մեկը:

ՎԱՐԴԻԼԱԿ ՏԵՐՏԵՐՅԱՆ

Իշխանուհի Դիանան ցանկանում էր դառնալ բրիտանացի «աշխարհի դեսպան»

Նոր գիրք պայծառ կնոջ մասին

Ուելսի իշխանուհի Դիանան իր մահվանից մի քանի ամիս առաջ ծրագրեր էր կազմում դառնալու բրիտանացի «աշխարհի դեսպան» եւ համաշխարհային մակարդակով ավելի ակտիվորեն զբաղվելու բարեգործությամբ, կիրակի օրը հաղորդել է բրիտանական The Sunday Times թերթը: «Կյանքի վերջին ամիսներին Դիանան իր հասարակական դերի նշանակությունն ավելի ուժեղ էր զգում, քան նախկինում»,- հրատարակության էջերում գրում է լրագրող եւ «Դիանայի ժամանակագրությունները» գրքի հեղինակ Թինա Բրաունը:

«Ես նրա հետ հանդիպեցի 1997 -ի հունիսին Նյու Յորքում ճաշկերույթի ժամանակ՝ Փարիզում տեղի ունեցած ավտոաղետից երկու ամիս առաջ, որի ժամանակ զոհվեցին ինքը եւ Դոդի ալ Ֆայեդը: Նա ոգեշնչված էր ընտրություններում Թոնի Բլերի տարած հաղթանակից: Դիանան կարծում էր, որ նա իր համար Մեծ Բրիտանիայի մարդասիրական դեսպանորդի դեր է պատրաստում»,- հիշում է Թինա Բրաունը:

ՕԶԳՐՈՒԹՅՈՒՆ ՀԻՇՈՏԱԿԻՆ

Եթե հիշում են, ուրեմն, ողջ է...

Կարո՞ղ ես պարել այն խաղաղությունը, որ պարում է ռանչպարը՝ տեսնելով արեւաբույր ու ոսկեբող իր ցորենի արտի ծփանքը...

Կարո՞ղ ես պարել վեհության այն զգացումը, որ պարում է գիտնականը, երբ իր հռչակը հայրենիքի սահմաններից է դուրս գալիս...

Կարո՞ղ ես պարել գոհության այն զգացումը, որ պարում է արվեստագետը, երբ գնահատանքի շռայլ խոսքեր են հնչում իր հասցեին...

Կարո՞ղ ես պարել այն զգացումը, որ պարում է բանաստեղծը, երբ իր խոսքերը շուրթից շուրթ են անցնում եւ երգ դառնում...

Անասելի ու անմեկնելի է գոհունակության ու գնահատված լինելու զգացումը, ինչին, ցավոք, ստեղծող ու ստեղծագործող մարդը այդպես էլ ականատես չի լինում կենդանության օրոք: Եվ այստեղ նրա գոհունակության ու գնահատված լինելու զգացումը հպարտություն է արթնացնում իր ժառանգների, հարազատների ու մտերիմների հոգիներում: Հպարտության ահա այսքան համեստ ու չափեզրված մի զգացում այսօր պարուրել է Ջավախքի վաղամեռիկ բանաստեղծ Օֆրա Օֆրոյանի զավակներին ու հարազատներին:

Հայոց լեզվի ու հայոց պատմության պահպանման համար մի քանի տասնամյակ կոիվ տվող ջավախեցին շարունակում է նոթել ճիչն իր մուսայի: Համոզված եմ, որ, անկախ ամեն ինչից, նա գրիչը վայր չի դնի եւ շարունակելու է ստեղծագործել, որ երբ՛ք, երբ՛ք չմարի Տերյանի, Չիվանու, Դեմիրճյանի... վառած կանթեղը հայ գրական աշխարհի:

Անվանի բանաստեղծ Օֆրա Օֆրոյանը երկրային կյանքում չհասցրեց լիարժեքորեն սանալ իր ընթերցողի գնահատականը: Փոխարենը նա որպես իր ժողովրդին նվիրված մարդ եւ բարերար, պարեց մեծարման զգացում եւ բազում-բազում անգամներ երախտիքի ու շնորհակալանքի խոսքերի արժանացավ: Ընդամենը 64 գարուն էր պետք նրան այս աշխարհում իր աշխարհը՝ հայ պոեզիայի իր հոգետար մատուռը կառուցելու համար:

Օֆրա Օֆրոյանը ծնվել է Ջավախքի Ախալքալաքի շրջանի Տորքիս գյուղում: Գյուղի միջնակարգ դպրոցն ավարտելուց հետո ուսումը շարունակել է Երեւանի Խաչատուր Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտի բանասիրական եւ քիմիական ֆակուլտետներում: Ուսումն ավարտելով՝ նա երկար տարիներ ծննդավայրի դպրոցում աշխատել է որպես մանկավարժ, միաժամանակ զբաղեցրել է նույն դպրոցի տնօրենի պաշտոնը: Կյանքի վերջին տարիներին Օ. Օֆրոյանը վարել է Ախալքալաքի շրջանային կրթության բաժինը: 1999-ին Երեւանի գրականության ինստիտուտում «Վիրահայ արձակ» ուսումնասիրությամբ նա պաշտպանել է թեկնածուական թեզ եւ ստացել բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան: Օֆրա Օֆրոյանը թողել է գրական մի համեստ ժառանգություն՝ բանաստեղծություններ, պատմվածքներ, վիպակներ, գրականագիտական հոդվածներ: Առ այսօր հրատարակվել է ավելի քան քսան ժողովածու (այդ թվում՝ վրացերեն)՝ «Ուշացած զոհում» (1990), «Լեռան զանգեր» (1996)..., իսկ 1996-ից մինչեւ 2003-ի մայիս ամիսը «Ասված սեր է» խորագրի ներքո նրա բանաստեղծությունների քառահատոր ժողովածուն է հրատարակվել: Շատ չանցած քառահատորին (արդեն հետմահու) հաջորդեց պատմվածքների արձակ ժողովածուն՝ «Երկնաբնակը» խորագրով: Օ. Օֆրոյանի կյանքի ու մտքի թելը կտրեց հանկարծահաս մահը 2003-ի մայիսին:

Քանի դեռ հետմահու հիշում են մարդուն, անկախ նրա սոցիալական դիրքից, կոչումից, զբաղեցրած պաշտոնից, նյութական կարողությունից..., ուրեմն, նա ողջ է:

Եվ ինչպես Օֆրա Օֆրոյանն է ասում.

«Ես հավատում եմ կյանքի հարատեւությանը,

մարդկային ընթացքին եւ գալիք սերնդի անքերի,

անկաշկանդ, ուղիղ կեցվածքին»:

Օրերս Գաբրիել Սունդուկյանի անվան ազգային ակադեմիական թատրոնում Օֆրա Օֆրոյանի անվան «Ասված սեր է» գրական հիմնադրամի նախաձեռնությամբ (նախագահ՝ Արտակ Ոսկանյան) տեղի ունեցավ գրական-երաժշտական հանդիսավոր երեկո՝ նվիրված ջավախեցի բանաստեղծ Օֆրա Օֆրոյանի ծննդյան 68-ամյակին: Երեկոն իրենց ներկայությամբ պատվել էին մեծաթիվ հյուրեր Մոսկվայից, Թբիլիսիից, Ջավախքից եւ Երեւանից: Լեփ-լեցուն էր հանդիսասրահը. գրական աշխարհին ծանոթ ու անծանոթ հանդիսատեսը մի պահ կտրվել էր ամառվա տաքից, որպեսզի մասնակից լիներ ազգային երգ ու պարով համեմված պոեզիայի երեկոյին: Օֆրոյանական էր երեկոն, գնահատանքի ջերմ խոսքեր հնչեցին բանաստեղծի հիշատակին, ընթերցվեցին նրա բանաստեղծություններից մի քանիսը, իսկ մի քանիսն էլ հնչեցին որպես երգ...

Գրական-երաժշտական հանդիսությանը մասնակցեցին ՀՀ վաստակավոր արտիստ, միջազգային մրցույթների դափնեկիր Հովհաննես Բաբախանյանը, ՀՀ վաստակավոր արտիստ Ռուբեն Կարապետյանը, ասմունքող Զարուհի Հակոբյանը, երգչուհի Նաիրա Ծատուրյանը, երգիչ Հարություն Բարեղամյանը եւ վրաց երգահան, երգչուհի Իրմա Սոխաձե: Այս երեկոյին հայկական լեռնադաշտ պարերով ու երգերով հանդես եկավ «Կարին» ավանդական երգի-պարի համույթը (գեղարվեստական ղեկավար՝ Գագիկ Գինոսյան):

Ասմունքի, երգ ու պարի գեղեցիկ եւ հուզիչ կատարումներով ամփոփվեց երեկոն...

Ն. ՄԵՎԼՈՒՆ

ԾԱՂԻԿԱԵԿԱՐՅԻ ԱՅԲԵՐՈՎ

Արթուր Աբրահամ. «Հայերն ուժեղ կամք ունեն եւ չեն սիրում պարտվել»

Արդեն ավանդույթ է դարձել, որ յուրաքանչյուր հաջող մենամարտից հետո IBF-ի վարկածով աշխարհի չեմպիոն Արթուր Աբրահամը «Յունիբանկի» հրավերով ժամանում է Երեւան եւ հանդիպում լրագրողներին: Երեկ էլ նա «Արմենիա-Մարիոթ» հյուրանոցում սիրով պատասխանեց իրեն ուղղված հարցերին:

Անդրադառնալով Խորեն Գետրի հետ կայացած մենամարտին, որում Արթուրը 11-րդ ռաունդում նոկաուտի էր ենթարկել մրցակցին, չեմպիոնը նշեց, որ այն իր համար շատ ծանր էր: Պատճառն այն էր, որ օսար հողում ուժերը չափել էր իր հայրենակցի հետ: Իսկ հայերն, Արթուրի բնութագրմամբ, ուժեղ կամք ունեն եւ չեն սիրում պարտվել, այդ պատճառով էլ շատ դժվար էր մենամարտելն ու հաղթելը: Ճիշտ է, Արթուրի կարծիքով Խորեն Գետրը չպետք է ձեռնոց նետեր իրեն, այլ ավելի ճիշտ կլիներ աշխարհի չեմպիոնի տիտղոսը վիճարկեր այլ վարկածով մենամարտում եւ այդ դեպքում գուցե այժմ աշխարհի չեմպիոն երկու հայ բոքսիստներ կունենայինք: Սակայն միաժամանակ Արթուրը բարձր է գնահատում Գետրին. «Շատ լրջորեն էի նախապատրաստվել Գետրի հետ մենամարտին, ամիսներ առաջ դիտել էի նրա մասնակցությամբ հանդիպումների տեսաժապավենները, ուսումնասիրել նրա ուժեղ եւ թույլ կողմերը: Գետրը ձախլիկ է եւ տիրապետում է ուժգին հարվածների: Նա տեմպային բոքսիստ է եւ մրցակիցը պետք է ֆիզիկապես լավ պատրաստված լինի, որպեսզի դիմանա այդ տեմպին: Առաջին 6 ռաունդներում Գետրը շատ աշխատեց ռինգում, իսկ ես ուժերս խնայում էի՝ սպասելով հարմար առիթի: Եվ այդ առիթը ներկայացավ 11-րդ ռաունդում»:

Արթուրը նշեց, որ մինչեւ Գերմանիայում հանդիպելը ինքը չի ճանաչել Խորեն Գետրին, որը 16 տարեկանից հեռացել է Հայաստանից: Ճիշտ է, Գերմանիայում միեւնույն ակումբում են մարզվել, սակայն տարբեր խաղաձեւերում: Թեեւ նորմալ հարաբերություններ մեջ է Խորեն Գետրի հետ, սակայն նրա հետ ընկերություն չի անում: Մենամարտից հետո էլ ռինգում մոտենալով մրցակցին, ասել է, որ ամենալավ բաներն է ցանկանում նրան: Գետրն այդ մենամարտում ուղեղի ցնցում էր ստացել ու տեղափոխվել հիվանդանոց, սակայն հաջորդ օրը ստորագրությամբ դուրս էր գրվել, թեեւ բժիշկները պնդում էին, որ անհրաժեշտ է դեռեւս բուժվել:

Արթուր Աբրահամը շատ բարձր կարծիքի է Վախթանգ Դարչինյանի մասին, որի հետ ժամանակին մեկ սենյակում են բնակվել: Արթուրը շատ ծանր է տարել Դարչինյանի պարտությունը եւ կարծում է, որ պատճառը մի պահ մեր բոքսիչամարտիկի կողմից զգոնության կորուստն էր:

Անդրադառնալով անձնական կյանքին, Արթուր Աբրահամը նշեց, որ նախկինի պես մտադիր է Հայաստանից ընտրել հարսնացու, որը պետք է արտաքնապես լինի գեղեցիկ, լավ բնավորություն ունենա: Իսկ առաջիկա մենամարտը նախատեսվում է դեկտեմբերի 8-ին Գերմանիայում, հավանաբար կրկին Բեռլինում: Մրցակիցն առայժմ հայտնի չէ: Ինչ վերաբերում է Միրանդայի հետ հնարավոր մենամարտի անցկացմանը, ապա ըստ Աբրահամի, գործնական ոչ մի առաջարկ առայժմ մրցակցից չի ստացել, բացի այդ էլ վերջինս այլ քաշային կարգ է տեղափոխվում: Իսկ մյուս տարի Արթուրի պրոմոութերը մտադիր է մենամարտեր կազմակերպել ԱՄՆ-ում, ինչն էլ ավելի մեծ ճանաչման կհասցնի հայ բոքսիչամարտիկին:

Արթուրն ընդամենը մի քանի օրով է Հայաստան ժամանել՝ «Յունիբանկի» հետ համատեղ աշխատանքները շարունակելու: Ինչպես հայտնի է, նրա մասին ֆիլմ է նկարահանվում, որից ի դեպ կադրեր են ցուցադրվել դահլիճում, մենամարտից առաջ: Խորեն Գետրգի հետ մենամարտով այդ ֆիլմի վրա ընթացող աշխատանքները կավարտվեն: Եղբայրը՝ Ալեքսանդրը եւս 2 մենամարտ է անցկացրել, դրանք ավարտելով նոկաուտով: Պրոֆեսիոնալ ռինգում նա հաղթել է բոլոր 19 մենամարտերում եւ եղբոր նման անպարտելի է: IBF-ի վարկանիշային ցուցակում Ալեքսանդրը 12-րդ տեղում է:

Համահայկական 4-րդ խաղերն ավարտվեցին

Օգոստոսի 26-ին Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի եւ բալետի պետական թատրոնի սրահը լեփ-լեցուն էր: Աշխարհի 94 երկրներից ժամանած 2.500 մարզիկներից, հյուրերից շատերը ներկա գտնվեցին Համահայկական 4-րդ խաղերի պատշաճավայելուչ փակման արարողությանը: Համահայկական խաղերի համաշխարհային կոմիտեի պատվո շքանշանը ՀՀ վարչապետ Սերժ Սարգսյանին հանձնեց կոմիտեի գործկոմի անդամ տրն Ալբերտ Բոյաջյանը եւ խորհն շնորհակալություն հայտնեց սպորտի բնագավառում ցուցաբերած գործունեության համար: ՀՀ վարչապետ Սերժ Սարգսյանը շնորհակալություն հայտնելով, նշեց. «Կարծում եմ, որ մեզանից յուրաքանչյուրը պետք է ուրախ լինի, որ պարգեւատրվում է, առավել եւս՝ Համահայկական համաշխարհային կոմիտեի կողմից, եւ խոստանում եմ, որ ամեն ինչ կանեմ, որպեսզի հայկական սպորտը նոր բարձունքներ նվաճի»:

Քիչ անց «Արդարացի խաղի» համար մրցանակ հանձնվեց Լոս Անջելեսի վոլեյբոլի տղամարդկանց թիմին: «Մարզական ոգու եւ համբերության» համար մրցանակ հանձնվեց Կահիրեի տղամարդկանց բասկետբոլի թիմին: Համահայկական խաղերի գեղեցկուհիներ ճանաչվեցին. 3-րդ տեղ՝ Մարինե Թոխատյանը (Բուենոս Այրես) եւ Լիլիթ Ստեփանյանը (Ստեփանակերտ), 2-րդ տեղը բաժին հասավ Նաիրի Քալաբյանին (Աքենի), իսկ «Միսս Համահայկական խաղեր» հռչակվեց երեւանցի Գայանե Թունյանը, որն էլ վարչապետ Սերժ Սարգսյանի ձեռամբ ստացավ գեղեցկուհու թագը կրելու պատիվն ու վարչապետի շնորհավորանքը:

ՄԱՐԻԵՏԱ ՄԱԿԱՐՅԱՆ

Ստեփանակերտի ֆուտբոլիստները կրկին խաղերի հաղթողներ

Երկրորդ անգամ անընդմեջ Համահայկական խաղերի ֆուտբոլի մրցաշարի հաղթող է ճանաչվում Ստեփանակերտի թիմը, որի կորիզը կազմում են «Լեռնային Արցախի» ֆուտբոլիստները: Վերջիններս անցած մրցաշրջանում հանդես էին գալիս Հայաստանի առաջին խմբի մրցաշարում եւ բարձրագույն խմբի առաջնության ուղեգիր էին նվաճել: Սակայն ֆինանսական պատճառներով «Լեռնային Արցախը» չմասնակցեց բարձրագույն խմբի այս տարվա առաջնությանը:

Ինչեւէ, Ստեփանակերտի թիմը 3-0 հաշվով հաղթելով Սամբուլի ֆուտբոլիստներին, երկրորդ անգամ անընդմեջ հռչակվեց խաղերի չեմպիոն, որի առիթով շնորհավորում ենք թիմի գլխավոր մարզիչ Սլավա Գաբրիելյանին ու նրա սաներին: Միայն ափսոս, որ եզրափակիչ խաղի ընթացքում կրքերը խաղադաշտում այնքան էին լարվել, որ մի քանի դրվագներում ֆուտբոլիստների միջեւ բաբախուկ սկսվեց եւ հարկ եղավ վիճաբանողներին բաժանել: Նման դեպքերն, իհարկե սվեր են գցում Համահայկական խաղերի վրա եւ տխուր խորհրդածություններ առիթ տալիս:

Մեծ հաջողություն պետք է համարել Բառնաուլի թիմի նվաճած բրոնզե մեդալները: 3-րդ տեղի համար պայքարում բառնաուլցիները 3-1 հաշվով հաղթեցին Լոս Անջելեսի թիմին:

Երեւանցիների առավելությամբ

Հյուսիսային մրցաշարում ոսկե մեդալների համար վճռորոշ խաղում մրցավեճի բռնվեցին Երեւանի եւ Վանաձորի թիմերը, որոնցում հիմնականում հանդես են գալիս հանրապետության առաջնությանը մասնակցող ֆուտբոլիստները: Երեւանցիների առավելությունը զգալի էր, որոնք էլ հաղթելով 6-2 հաշվով, հռչակվեցին խաղերի չեմպիոն: Բրոնզե մեդալակիր դարձավ Թեհրանի թիմը, որը 10-7 հաշվով պարտության մատնեց Վլադիմիրի ֆուտբոլիստներին:

ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ԽԱՂԵՐՈՒՄ

Սոչիի եւ Երեւանի թիմերն ուժեղագույնն են բասկետբոլում

Համահայկական խաղերի ծրագրում ընդգրկված 10 մարզաձեւերից, թերեւս, ամենամեծ հետաքրքրությունը ներկայացնում էր բասկետբոլի մրցաշարը՝ հաշվի առնելով նաեւ այն փաստը, որ մրցումներն անցկացվեցին Երեւանում:

Թե՛ կանանց, թե՛ տղամարդկանց մրցաշարերում բավական թեժ ու համառ մրցապայքար էր ծավալվել: Տղամարդկանց մրցաշարում բոլորից հաջող հանդես եկան եւ եզրափակիչում չեմպիոնի տիտղոսը վիճարկեցին Սոչիի եւ Գլենդելի բասկետբոլիստները: Կիսաեզրափակիչում Սոչիի բասկետբոլիստները 68-59 հաշվով պարտության էին մատնել Սիդնեյի թիմին, իսկ Գլենդելը 95-61 հաշվով առավելության էր հասել Ժնեւի թիմի նկատմամբ:

Եզրափակիչ խաղն էլ առանձնացավ պայքարի թեժությամբ՝ հաճելի լարվածության մեջ պահելով հանդիսականներին: Սոչիի բասկետբոլիստներն իրենց կարողացան լավագույն կողմերով դրսեւորել եւ 15 միավորի առավելությամբ արժանի հաղթանակ տոնեցին (76-61): Իհարկե, հասկանալի կարելի է թիմի բասկետբոլիստներին, որոնք մեծ ոգեւորությամբ նշեցին հաղթանակը: Իսկ թիմի գլխավոր մարզիչ Ալիկ Վեհաթեյանը մեր հետ ճեպազրույցում հետեւյալը նշեց. «Շատ ուրախ եմ, որ հաղթեցինք: Տղաներն իրենց լավագույն հատկանիշները դրսեւորեցին, այսքան ոնկան մարտական բնավորությամբ ու արժանի հաղթանակ տարան: Մրցաշարն ընդհանուր առմամբ լավ էր կազմակերպված, թիմերն էլ բավական բարձր խաղամակարդակ դրսեւորեցին»:

3-րդ տեղի համար մրցապայքարում եւս պայքարը բավական թեժ էր: Ամեն ինչ վճռվեց խաղավերջում: Հաջողությունն ուղեկցեց Սիդնեյի թիմին, որը 4 միավորի առավելությամբ, 62-58 հաշվով հաղթեց ժնեւցիներին: 5-րդ տեղը զբաղեցրեց Թեհրանի թիմը, որը 65-56 հաշվով առավելության հասավ Սամբուլի բասկետբոլիստների նկատմամբ: 7-8-րդ տեղերի համար մրցավեճում Կահիրեի թիմը 74-62 հաշվով հաղթեց Ֆրեզնոյին:

Կանանց մրցապայքարում չեմպիոնի կոչմանն արժանացավ Երեւանի թիմը: Մայրաքաղաքի բասկետբոլիստուհիները հաջող անցկացրին նաեւ վճռական փուլը: Կիսաեզրափակիչում Երեւանի թիմը մեծ առավելությամբ հաղթեց Ստեփանակերտցիներին (93-49), իսկ եզրափակիչում պարտության մատնեց Գլենդելի թիմին (90-72): 3-րդ տեղը գրավեց Թեհրանի թիմը, որը 72-65 հաշվով պարտության մատնեց Ստեփանակերտի բասկետբոլիստուհիներին: 5-րդ տեղը զբաղեցրին Գյումրիի բասկետբոլիստուհիները՝ հաղթելով Սպահանի թիմին (80-67):

Հայ ըմբիշն արծաթե մրցանակակիր

Պեկինում ընթացող ազատ ոճի ըմբշամարտի աշխարհի առաջնությունում հաջող հանդես եկավ Օհան Գիֆինյանը: Մինչեւ 50 կգ քաշային կարգում հայ ըմբիշը հաջող մրցելույթների շնորհիվ հասավ մինչեւ եզրափակիչ, որտեղ պարտություն կրեց եւ արժանացավ արծաթե մեդալի:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ՄԱՍԻՆ

«Պատմամշակութային արգելոց-թանգարանների եւ պատմական միջավայրի պահպանության ծառայություն» ՊՈԱԿ-ն (պատվիրատու) «ՊՄԱԹ ՊՄՊ ԳՀԱՊՁԲ-07/01» ծածկագրով կազմակերպում է գնանշման հարցում՝ **«Պատմամշակութային արգելոց-թանգարանների եւ պատմական միջավայրի պահպանության ծառայություն» ՊՈԱԿ-ի կարիքների համար վարչական շենքի մեսաղալաստե պատուհանների ձեռք բերման նպատակով:** Հրավեր ստանալու համար անհրաժեշտ է 500 ՀՀ դրամ փոխանցել «Հայէկոնոմբանկ»-ի «Պատմամշակութային արգելոց-թանգարանների եւ պատմական միջավայրի պահպանության ծառայություն» ՊՈԱԿ-ի N 163008140325 հաշվեհամարին եւ սույն հայտարարության հրապարակման օրվան հաջորդող 8 աշխատանքային օրվա ընթացքում դիմել պատվիրատուին հետեւյալ հասցեով՝ ք. Երեւան, Թախիով 15, հեռ.՝ 58 74 25, Վ. Իսահակյանին:

Հրավերն անձին տրվում է անձը հաստատող փաստաթղթի, իսկ կազմակերպության անունից հանդես գալու դեպքում՝ նաեւ անձի լիազորությունները հավաստող համապատասխան փաստաթղթի հիման վրա: Հայտերը պետք է ներկայացնել մինչեւ դրանց բացման պահը՝ սույն հայտարարության հրապարակելու օրվան հաջորդող օրվանից հաշված 10-րդ աշխատանքային օրվա ժամը 12-ը:

Request for Proposals

USAID funded "Program for Institutional and Regulatory Strengthening of Water Management in Armenia" implemented by PA Government Services Inc., requests proposals for implementation of the Scope of Work designed for Classification of Water Resources and Setting of Goals for River Basin Planning. The objective of this work is to support the Water Resources Management Agency of the Ministry of Nature Protection of the Republic of Armenia in the preparation and testing of separate parts of "Model Guidelines for River Basin Planning in Armenia".

Interested organizations may obtain the SOW, Technical Guidance Document, Instructions to Bidders and additional information about the Program form the www.paconsulting.am/water website or may collect from the Program Administrative Assistant at 11/6 Proshian Street, Yerevan.

Qualified organizations should submit hard copies of their Technical and Financial proposals to 11/6 Proshian Street, no later than 18:00, September 17, 2007. Separately sealed envelopes with Technical and Financial proposals shall be addressed to COP of USAID Program for Institutional and Regulatory Strengthening of Water Management in Armenia, 11/6 Proshian Street, Yerevan. Questions from bidders will be accepted until September 7, 2007 at info@paconsulting.am e-mail address.

Հայտարարություն

ԱՄՆ ՍԶԳ-ի կողմից ֆինանսավորվող «Ջրային ռեսուրսի կառավարման ինստիտուցիոնալ եւ օրենսդրական հզորացման ծրագիրը», որն իրականացվում է Փի էյ Գավրնմենթ Ինկ. կազմակերպության կողմից, հայտարարում է մրցույթ «Ջրային ռեսուրսների դասակարգում եւ գետավազանային պլանավորման նպատակների սահմանում» տեխնիկական առաջադրանքի (ՏԱ) իրականացման համար: Սույն աշխատանքի նպատակն է օժանդակել Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության աշխատակազմի Ջրային ռեսուրսների կառավարման գործակալությանը «Հայաստանում գետավազանային պլանավորման մոդելային ուղեցույցի» առանձին մասերի մշակման եւ փորձարկման գործում:

ՏԱ-ն, տեխնիկական ուղեցույց-փաստաթուղթը, Հայտատուներին ցուցումներ եւ ծրագրի վերաբերյալ լրացուցիչ տեղեկություններ հետաքրքրված կազմակերպությունները կարող են ստանալ www.paconsulting.am/water ինտերնետային կայքից կամ Ծրագրի ադմինիստրատիվ օգնականից ք. Երեւան, Պռոշյան 11/6 հասցեով:

Որակավորված կազմակերպությունները իրենց տեխնիկական եւ ֆինանսական հայտերը պետք է ներկայացնեն Ծրագրի գրասենյակ ք. Երեւան, Պռոշյան 11/6 հասցեով, մինչեւ սույն թվականի սեպտեմբերի 17-ը, ժամը 18:00: Տեխնիկական եւ ֆինանսական հայտերը պետք է ներկայացվեն առանձին-առանձին կնքված ծրարներով եւ հասցեագրված լինեն «Ջրային ռեսուրսի կառավարման ինստիտուցիոնալ եւ օրենսդրական հզորացման ծրագրի» տնօրենին, ք. Երեւան, Պռոշյան 11/6 հասցեով: Հարցերը կընդունվեն մինչեւ սեպտեմբերի 7-ը info@paconsulting.am էլեկտրոնային հասցեով:

ՀԱՍԱՐՈՍ

Երեւանցի վոլեյբոլիստները մրցակցությունից դուրս են

Վոլեյբոլի մրցաշարում թե՛ կանանց, թե՛ տղամարդկանց մրցավեճում առավելությունը Երեւանի թիմերի կողմն էր: Կանայք 3-0 հաշվով պարտության մատնեցին Սամբուլի թիմին, իսկ տղամարդիկ առավելության հասան Գլենդելի նկատմամբ (3-1):

Կանանց մրցաշարում 3-րդ տեղի համար պայքարում ուժերը չափեցին Սիսիանի եւ Արթիկի վոլեյբոլիստուհիները: Սիսիանցիների առավելությունը բացահայտ էր, որոնք շահեցին բոլոր 3 խաղափուլերը: Տղամարդկանց մրցաշարում բրոնզե մեդալներին արժանացավ Սամբուլի թիմը՝ 3-1 հաշվով պարտության մատնելով թեհրանցիներին:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը հայտարարում է արտաքին մրցույթ՝ վճարային եւ տեղեկատվական համակարգերի զարգացման վարչության բանկային տեխնոլոգիաների մշակման բաժնի «բաժնի պետ» թափուր աշխատատեղի համալրման համար:

Աշխատանքի նպատակն է.

Բաժնի աշխատանքների բնականոն ընթացքի կազմակերպում:

Ստորաբաժանման խնդիրներն են.

- համակարգչային ժամանակակից վճարահաշվարկային համակարգերի եւ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի ներքին ավտոմատացված համակարգերի ստեղծում, ներդրում եւ հետագա զարգացում.
- ստեղծվող կամ ձեռք բերվող Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի ներքին եւ միջբանկային վճարային, ինչպես նաեւ տեղեկատվական համակարգերի սկզբունքների մշակում.
- Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի տեղեկատվական համակարգերի զարգացման ռազմավարության մշակմանը մասնակցություն.
- Հ�հ կենտրոնական բանկի ներքին եւ միջբանկային համակարգերի ստեղծման եւ ներդրման համար անհրաժեշտ նախագծերի, տեխնոլոգիաների մշակում եւ համապատասխան տեխնիկական առաջադրանքների ձեւավորում.
- ըստ անհրաժեշտության Հայաստանի Հանրապետության բանկերում ներդրվող ծրագրային համակարգերի փորձարկում եւ համապատասխան եզրակացությունների ներկայացում:

Պահանջվող կրթությունը եւ գիտելիքների շրջանակը

Բարձրագույն տեխնիկական կրթության պարագայում 3 տարվա մասնագիտական աշխատանքային փորձ:

Բարձրագույն ոչ մասնագիտական կրթության պարագայում 6 տարվա մասնագիտական աշխատանքային փորձ:

Գիտելիքներ հետեւյալ ոլորտներում՝ կառավարում (խորացված), վճարահաշվարկային համակարգերի տեխնոլոգիական եւ տեխնիկական ասպեկտներ (խորացված), ծրագրային (այդ թվում տեղեկատվական շտեմարաններ) համակարգերի նախագծում, ներդրում եւ սպասարկում (խորացված), տեխնոլոգիաների (ներառյալ տեխնիկական առաջադրանքների) մշակման համար հատուկ ծրագրավորման միջոցների աշխատանքի իմացություն (խորացված), հաշվողական տեխնիկայի կառուցվածքի իմացություն (խորացված), գլոբալ եւ լոկալ ցանցեր, ցանցային արձանագրություններ (միջանկյալ), ռելացիոն տվյալների բազաների կառավարման համակարգեր (միջանկյալ), ալգորիթմների տեսություն (միջանկյալ), օբյեկտ ուղղորդված ծրագրավորում (միջանկյալ), բանկային գործ (միջանկյալ), օպերացիոն համակարգեր (ներածական), օպտիմալացման մեթոդներ (ներածական), հաշվողական մաթեմատիկա (ներածական), ծրագրավորման լեզուներ (ներածական):

Լեզուների իմացություն՝ հայերեն լեզվի իմացություն, անգլերեն եւ ռուսերեն լեզուների իմացություն (մասնագիտական գրականություն ընթերցելու նպատակով):

Անհրաժեշտ հմտություններ՝ Համակարգչով աշխատելու հմտություն (խորացված), CASE կամ համանման տեխնոլոգիաների իմացություն:

Աշխատավարձը. 451 500 դրամ:

Փաստաթղթերի ընդունելության վերջնաժամկետը՝ 2007թ. սեպտեմբերի 11-ը

Պահանջվող փաստաթղթերը.

- դիմումի ձեւ (ձեւը զետեղված է ՀՀ կենտրոնական բանկի էլեկտրոնային կայքում - www. cba. am /«Մեր մասին»/«Թափուր աշխատատեղեր» բաժնում, կամ տրվում է ՀՀ կենտրոնական բանկում)

Դիմումի ձեւը կարող է ներկայացվել էլեկտրոնային տարբերակով՝ hrm@cba.am հասցեով:

Մրցութային հարցաշարը եւ Կենտրոնական բանկում մրցույթների անցկացման վերաբերյալ տեղեկատվությունը զետեղված է Կենտրոնական բանկի էլեկտրոնային կայքում (www. cba. am) կամ տրվում է Կենտրոնական բանկում:

Պարզաբանումների համար կարող եք զանգահարել՝ 56-14-40 եւ 06-34 (ներքին):

ԿԲ մամուլի ծառայություն

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ՄՐՑԱԿՑԱՅԻՆ ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Պետական գնումների գործակալություն» ՊՈԱԿ-ն (պատվիրատու) ՊԳԳ - ՄԲԾՁԲ - 07/21 ծածկագրով կազմակերպում է մրցակցային բանակցություններ՝ **ՀՀ ԿԱ հարկային պետական ծառայության կարիքների համար համակարգչային ծրագրերի մշակման ծառայությունների ձեռքբերման նպատակով:** Հրավեր ստանալու համար անհրաժեշտ է 725 ՀՀ դրամ փոխանցել «Արդշինինվեստբանկ» «Բեջ-գալ» ՍՊԸ-ի 247230066158 հաշվեհամարին եւ սույն հայտարարության հրապարակման օրվան հաջորդող 8 աշխատանքային օրվա ընթացքում դիմել պատվիրատուին հետեւյալ հասցեով՝ ք.Երեւան, Կոմիտասի պ., 54/բ, հեռ. 28-93-25, հանձնաժողովի քարտուղար՝ Կ. Դրամբյանին:

Հրավերն անձին տրվում է անձը հաստատող փաստաթղթի, իսկ կազմակերպության անունից հանդես գալու դեպքում՝ նաեւ անձի լիազորությունները հավաստող համապատասխան փաստաթղթի հիման վրա: Հայտերը պետք է ներկայացնել մինչեւ դրանց բացման պահը՝ մրցակցային բանակցությունների հայտարարության հրապարակման օրվան հաջորդող օրվանից հաշված 10-րդ աշխատանքային օրը, ժամը 11.00-ն:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ՄՐՑԱԿՑԱՅԻՆ ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Պետական գնումների գործակալություն» ՊՈԱԿ-ն (պատվիրատու) «ՊԳԳ-ՄԲԱՊՁԲ-07/33» ծածկագրով կազմակերպում է մրցակցային բանակցություններ՝ **ՀՀ ԿԱ հարկային պետական ծառայության կարիքների համար գրասենյակային կահույքի ձեռքբերման նպատակով:** Հրավեր ստանալու համար անհրաժեշտ է 750 ՀՀ դրամ փոխանցել «Արդշինինվեստբանկ» «Բեջ-գալ» ՍՊԸ՝ 247230066158 Հ/Հ -ին եւ սույն հայտարարության հրապարակման օրվան հաջորդող 8 աշխատանքային օրվա ընթացքում դիմել պատվիրատուին հետեւյալ հասցեով՝ ք. Երեւան, Կոմիտասի պ., 54/բ, 115 սենյակ հեռ.՝ 28-93-25, Կ. Դրամբյանին:

Հրավերն անձին տրվում է անձը հաստատող փաստաթղթի, իսկ կազմակերպության անունից հանդես գալու դեպքում՝ նաեւ անձի լիազորությունները հավաստող համապատասխան փաստաթղթի հիման վրա: Հայտերը պետք է ներկայացնել մինչեւ դրանց բացման պահը՝ սույն հայտարարության հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 10-րդ աշխատանքային օրվա ժամը 10.30-ն:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ՄՐՑԱԿՑԱՅԻՆ ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Պետական գնումների գործակալություն» ՊՈԱԿ-ն (պատվիրատու) «ՊԳԳ-ՄԲԱՊՁԲ-07/34» ծածկագրով **կազմակերպում է մրցակցային բանակցություններ՝ ՀՀ ԿԱ հարկային պետական ծառայության կարիքների համար գրասենյակային տեխնիկայի, համակարգչային եւ պատճենահանման օժանդակ սարքավորումների ձեռքբերման նպատակով:** Հրավեր ստանալու համար անհրաժեշտ է 650 ՀՀ դրամ փոխանցել «Արդշինինվեստբանկ» «Բեջ-գալ» ՍՊԸ 247230066158 Հ/Հ -ին եւ սույն հայտարարության հրապարակման օրվան հաջորդող 8 աշխատանքային օրվա ընթացքում դիմել պատվիրատուին հետեւյալ հասցեով՝ ք. Երեւան, Կոմիտասի պ., 54/բ, 108 սենյակ հեռ.՝ 28-93-25, Հ. Այունցին:

Հրավերն անձին տրվում է անձը հաստատող փաստաթղթի, իսկ կազմակերպության անունից հանդես գալու դեպքում՝ նաեւ անձի լիազորությունները հավաստող համապատասխան փաստաթղթի հիման վրա: Հայտերը պետք է ներկայացնել մինչեւ դրանց բացման պահը՝ սույն հայտարարության հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 10-րդ աշխատանքային օրվա ժամը 12.00-ն:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ՄԱՍԻՆ

«Պետական գնումների գործակալություն» ՊՈԱԿ-ն (պատվիրատու) «ՊԳԳ-ԳՀԾՁԲ- 07/39» ծածկագրով կազմակերպում է գնանշման հարցում՝ **ՀՀ ԿԱ հարկային պետական ծառայության կարիքների համար ՀՀ ԿԱ ՀՊԾ Վանաձորի հարկային տեսչության վարչական շենքի կառուցման աշխատանքների տեխնիկական հսկողության ծառայությունների ձեռքբերման նպատակով:** Հրավեր ստանալու համար անհրաժեշտ է 625 ՀՀ դրամ փոխանցել «Արդշինինվեստբանկ» «Բեջ-գալ»ՍՊԸ-ի 247230066158 հաշվեհամարին եւ սույն հայտարարության հրապարակման օրվան հաջորդող 8 աշխատանքային օրվա ընթացքում դիմել պատվիրատուին հետեւյալ հասցեով՝ ք. Երեւան, Կոմիտասի պ., 54/բ, հեռ.՝ 28-93-25, Կ. Դրամբյանին:

Հրավերն անձին տրվում է անձը հաստատող փաստաթղթի, իսկ կազմակերպության անունից հանդես գալու դեպքում՝ նաեւ անձի լիազորությունները հավաստող համապատասխան փաստաթղթի հիման վրա: Հայտերը պետք է ներկայացնել մինչեւ դրանց բացման պահը՝ սույն հայտարարության հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 10-րդ աշխատանքային օրվա ժամը 11.35-ն:

Երիտասարդության եւ համայնքների գործողությունների ծրագիր

USAID — ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ — AED

Կրթությամբ զարգացման ակադեմիայի երիտասարդության եւ համայնքների գործողությունների ծրագիրը (ԿԶԱ/ԵՀԾ) ցանկանում է լրացնել մարզային համակարգողի թափուր պաշտոնը Այունիի մարզում աշխատելու համար

Աշխատանքային պարտականությունները ներառում են.

• Այունիի մարզի՝ թվով մինչեւ ութ համայնքների հետ կապերի հաստատում եւ պահպանում՝ համայնքների երիտասարդ եւ տարիով ավելի մեծ անդամների խաղաղաշնչական ակտիվության եւ հանրային խնդիրների վերաբերյալ նրանց իրազեկության բարձրացման, ինչպես նաեւ այդ խնդիրների լուծման գործընթացում նրանց ներգրավվածության ընդլայնման նպատակով:

• Համայնքի անդամների մոբիլիզացում, ժողովների վարում, կարիքների գնահատում, դրանց վերաբերյալ հաշվետվությունների պատրաստում եւ ներկայացում, ուղղորդում, ծրագրի մոնիտորինգ, եւ այլն:

Պահանջվող փորձ եւ հմտություններ.

- ունենալ համայնքների հետ աշխատանքի եւ համայնքի անդամների մոբիլիզացման եւ օժանդակման առնվազն երկու տարվա փորձ զարգացման ոլորտում գործող որեւէ կազմակերպությունում,
- ունենալ փոխգործակցության եւ ներկայացման/հոսքորական խոսքի գերազանց հմտություններ,
- ծրագրի իրականացման գործում ցուցաբերել ստեղծագործական եւ գործնական մոտեցում՝ կշռադատված ձեւով աջակցելով եւ խորհրդատվություն տրամադրելով համայնքի երիտասարդ եւ չափահաս անդամներին,
- աշխատանքում դրսեւորել մեծ մղում եւ եռանդ,
- լինել կազմակերպված եւ հետեւողական աշխատանքը կազմակերպելու եւ տարբեր մարտահրավերներ եւ հնարավորություններ ունեցող բազմազան միջավայրերում մեծ ներգործություն ունեցող աշխատանք իրականացնելու գործում,
-ունենալ ղեկավարության հետ նվազագույն շփման պայմաններում աշխատելու ունակություն եւ փորձ,
- ելնելով ծրագրի պահանջներից՝ պատրաստ լինել հաճախ եւ տարվա բոլոր եղանակներին ճանապարհորդել Այունիի մարզի ողջ տարածքով, ինչպես նաեւ մարզից երեւան,
- տիրապետել համակարգչով աշխատելու հմտություններին (հատկապես Microsoft Office, Internet եւ email ծրագրերին),
- անգլերեն լեզվի իմացությունը (խոսել, գրել, կարդալ) ցանկալի է, սակայն պարտադիր պահանջ չէ:

Դիմել ցանկացողները կարող են փաստաթղթերը (նամակ եւ ինքնակենսագրություն) ներկայացնել ԿԶԱ/ԵՀԾ՝ հետեւյալ հասցեով.

Երեւան, Այգեձոր փողոց 10, կամ ուղարկել **ycap@aed.am** էլ. փոստի հասցեով:

Փաստաթղթերի ներկայացման վերջնաժամկետն է 2007թ. սեպտեմբերի 3-ը:

Լրացուցիչ տեղեկությունների համար զանգահարել (37410) 22 56 36; 26 69 36

EURASIA FOUNDATION

Ռուսաստանի Դաշնություն Կորպորատիվ սոցիալական ներդրման (ԿՍՆ) թեմայով
փորձի փոխանակման այցելության հրավեր

Եվրասիա հիմնադրամի հայաստանյան ներկայացուցչությունը հրավիրում է Հայաստանի գործարարներին մասնակցելու Ռուսաստանի Դաշնությունում կայանալիք փորձի փոխանակման այցին եւ ծանոթանալու այն ծրագրերին, որոնք իրականացվում են ԿՍՆ ծրագրի շրջանակներում: Այս այցի նպատակն է զարգացնել հայաստանյան խոշոր եւ միջին բիզնեսի կարողությունները ԿՍՆ ոլորտում ընդգրկելու համար:

Ով կարող է դիմել՝

Այն անհատները, ովքեր զբաղեցնում են ղեկավար պաշտոններ (մարկետինգի մենեջերներ, տնօրեններ, սեփականատերեր) Հայաստանի խոշոր եւ միջին ձեռնարկություններում կարող են դիմել փորձի փոխանակման այցին մասնակցելու համար:

Ժամանակացույց՝

Դիմումներն ընդունվում են հայերեն, ռուսերեն կամ անգլերեն լեզուներով, որոնց հիման վրա կընտրվեն մասնակիցներ: Դիմումի ձեւը եւ այլ տեղեկություններ՝ կապված այցի նպատակների եւ մասնակիցների ընտրության կարգի հետ, կարող եք ձեռք բերել ԵՀ-ի կայքէջից www.eurasia.am կամ այցելել ԵՀ-ի երեւանյան գրասենյակ՝ Զարոբյան 56 հասցեով: Առավել մանրամասն տեղեկությունների համար կարող եք զանգահարել ծրագրերի համակարգող Մարինա Այվազյանին 58-60-95, 58-60-35 (ներքին 208), ինչպես նաեւ գրել mara@eurasia.am էլեկտրոնային հասցեով: Դիմումներն ընդունվում են մինչեւ **ս./թ. սեպտեմբերի 6, ժամը 18:00** վերոհիշյալ հասցեով: Մասնակիցների անունները կհրապարակվեն **ս./թ. սեպտեմբերի 11-ին:**

Այն ընկերությունները, որոնք ցանկություն կհայտնեն վճարել այցի հետ կապված բոլոր ծախսերը (ճանապարհածախսը, գիշերավարձը, օրապահիկը եւ տեղում իրականացվող ճանապարհային ծախսերը) ինքնաբերաբար կընդգրկվեն փորձի փոխանակման խմբում:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ՄՐՑԱԿՑԱՅԻՆ ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Պետական գնումների գործակալություն» ՊՈԱԿ-ն (պատվիրատու) ՊԳԳ-ՄԲԱՇՁԲ-07/133 ծածկագրով կազմակերպում է մրցակցային բանակցություններ՝ **ՀՀ Երեւանի քաղաքապետարանի կարիքների համար Երեւան քաղաքի կենդանաբանական այգու կոկորդիլոսների կացարանի կառուցման աշխատանքների ձեռքբերման նպատակով:** Հրավեր ստանալու համար անհրաժեշտ է 1200 ՀՀ դրամ փոխանցել «Արդշինինվեստբանկ» Երեբունու մասնաճյուղ «Բեջ-Գալ» ՍՊ ընկերության N 2477230066158 հաշվեհամարին եւ սույն հայտարարության հրապարակման օրվան հաջորդող 8 աշխատանքային օրվա ընթացքում դիմել պատվիրատուին հետեւյալ հասցեով՝ ք.Երեւան, Կոմիտասի պ., 54/բ, հեռ. 28-93-25, հանձնաժողովի քարտուղար Հ. Ավետիսյանին:

Հրավերն անձին տրվում է անձը հաստատող փաստաթղթի, իսկ կազմակերպության անունից հանդես գալու դեպքում՝ նաեւ անձի լիազորությունները հավաստող համապատասխան փաստաթղթի հիման վրա: Հայտերը պետք է ներկայացնել մինչեւ դրանց բացման պահը՝ մրցակցային բանակցությունների հայտարարության հրապարակման օրվան հաջորդող օրվանից հաշված 10-րդ աշխատանքային օրը, ժամը 12:00-ն:

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ՀԱՆԵՔԱՇԱՐԵԼ՝ 58-29-60

Լրատուական գործունեություն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետության 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 02 Ա N 047261, տրված՝ 17.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիսեան: Տպաքանակ՝ 3000, սերտագրված է տպագրության՝ 27.08.2007, գինը՝ 100 դրամ, տպագրում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում՝ Արշակունյաց 2: